

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՔՈԶԱՐՅԱՆԱԿԱՆ «ԱՃԻ»
ԱՌԱՍՊԵԼԸ



33(47.925)

2P-34

հշ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

0150

ՔՈԶԱՐՅԱՆԱԿԱՆ
«ԱՃԻ» ԱՌԱՍՊԵԼԸ



ԱՅԿԱՅԻ

ԵՐԵՎԱՆ
2018



Մասնագիտական խմբագիր՝
Վահագն Խաչատրյան

ASHOT MARKOSYAN

THE QOCHARYAN "GROWTH" MYTH

Erevan 2018

Մարկոսյան Աշոտ/ Քոչարյանական «աճի» առասպելը, – Եր.,
«Անտարես» հրատ., 2018թ. – 120 էջ:

Աշխատանքում վերլուծվել են Հայաստանի Հանրապետությունում 1999–2008 թթ.-ին իրականացված տնտեսական քաղաքականությանը բնորոշ գծերը, միտումները և պետական վիճակագրական փաստացի ու հարուստ տվյալների հիման վրա ցույց են տրվել այդ ժամանակահատվածում իրականացված քաղաքականության ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ազդեցության բացասական հետևանքները ՀՀ տնտեսության, դրա առանձին ոլորտների և բնակչության բարեկեցության վրա:

Նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

ISBN 978-9939-76-327-9

© Մարկոսյան Ա., 2018

© «Անտարես», 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | 5 |
| 1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԸ ԿԱՄ ԿՈՐՄՎԱԾ ՏԱՄՆԱՄՅԱԿԸ | 7 |
| 2. ԲՈՂԱՐՅԱՆԱԿԱՆ «ԱՃԻ» «ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ» | 17 |
| 2.1. Շինարարությունը | 17 |
| 2.2. Անձնական (անհատական) դրամական փոխանցումները | 25 |
| 2.3. Բնակչության զբաղվածությունը | 27 |
| 2.4. Արտաքին առևտուրը և երկրի համեմատական առավելությունները | 30 |
| 2.5. Արտաքին պարտքը | 32 |
| 3. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ | 33 |
| 3.1. Հանրապետության վճարային հաշվեկշիռը | 33 |
| 3.2. Բնակչության աղքատացումը, անհավասարության խորացումը և աղքատության հաղթահարման դրամական արժեքը | 40 |
| 3.3. Ազգային հարստություն ստեղծելու տնտեսության ներուժը | 43 |
| ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | 49 |
| ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ | 51 |

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

*Աշխարհի բոլոր ժամանակների և ժողովուրդների
առասպելները ստեղծել են մարդիկ:
Ժողովրդական իմաստություն*

Հատկապես վերջին օրերին, կապված հայտնի իրադարձությունների հետ, ակտիվացել է Հայաստանի երրորդ հանրապետության երկրորդ նախագահը: Մասնավորապես, 2018թ.-ի օգոստոսի 16-ին երկիր Մեդիա հեռուստաընկերությանը տրված հարցազրույցում նա նշեց, որ իր նախագահական 10-ը տարիների ընթացքում հանրապետությունում գրանցվել է աննախադեպ երկնիշ տնտեսական աճ, որի արդյունքում ՀՀ ՀՆԱ-ն ավելացել է ավելի քան 5 անգամ, իսկ պետական բյուջեի եկամուտները՝ 8 անգամ:

Սովորական քաղաքացու վրա այս թվերը կարող են ունենալ տպավորիչ ազդեցություն, որովհետև տասնամյակի ընթացքում մակրոտնտեսական նման ցուցանիշների աճը երկրների տնտեսական պատմության մեջ իրոք աննախադեպ է: Սակայն, յուրաքանչյուր բանական մարդ հարց է տալիս, թե ինչպե՞ս կարող է ղժվարին քաղաքական, սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակում հայտնված փոքր երկիրը գրանցել այդպիսի բարձր ցուցանիշներ: Եվ մի՞թե ՀՀ երկրորդ նախագահը այնքան զորեղ էր, որ կարողացավ հասնել նման ձեռքբերումների և նվաճումների:

Ո՞րն է իրողությունը, և նման պնդումները ի՞նչ աղերս ունեն ճշմարտության հետ: Այս և նմանատիպ այլ հարցերին պատասխանելու համար ամենակարևոր փաստարկը «չոր թվերի լեզվով» խոսելն է, այդ պատճառով էլ ստորև ներկայացվող նյութում օգտագործվում են բացառապես պետական պաշտոնական վիճակագրական տվյալներն ու դրանց հիման վրա կատարված վերլուծություններն ու եզրահանգումները:

Քոչարյանական տասնամյակում իրականացված տնտեսական քաղաքականությունը բնութագրելու նպատակով բերված ցուցանիշների վիճակագրական շարքերը ընդգրկում են 1999-ից 2010-ը թվականները: Ու թեև քոչարյանական տխրահոջակ նախագահական կառավարման տասնամյակն ավարտվում է 2008թ.-ի մարտի 1-ով, այդ քաղաքականության սնանկությունը ցույց տալու համար նպատակահարմար գտանք ներկայացնել նաև 2009թ.-ի համապատասխան ցուցանիշները, որպեսզի առավել պատկերավոր դառնան քոչարյանական կորսված տասնամյակի անփառունակությունը և երկրի համար ունեցած թե՛ քաղաքական և թե՛ սոցիալ-տնտեսական ծանր հետևանքները:

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԱՆԻԴՊՈՒԼՅԱՑԻԱԼԵՐԸ ԿԱՄ ԿՈՐՍՎԱԾ ՏԱՆԱՄՅԱԿԸ

Я тогда — по полю вдоль реки ...
Света — тьма, нет Бога!
А в чистом поле — васильки,
И дальняя дорога.
Вдоль дороги — лес густой
С бабами-ягами,
А в конце дороги той
Плаха с топорами.

Где-то кони пляшут в такт,
Нехотя и плавно.
Вдоль дороги всё не так,
А в конце — подавно.
И ни церковь, и ни кабак —
Ничего не свято!
Нет, ребята, всё не так!
Всё не так, ребята...

*Из песни "Моя цыганская"
В. Высоцкий*

Այդուսակ 1-ում ներկայացված են ՀՀ ՀՆԱ-ի (այդ թվում՝ բնակչության մեկ շնչի հաշվով), ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարժեքի և ՀՀ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները:

Մեր խորին համոզմամբ ՀՀ-ում տնտեսական աճի ցուցանիշները գիտակցաբար աղավաղվել են՝ նվազեցնելով դրանց բազիսային (1990թ.) մակարդակը: Այդպիսի մոտեցման նպատակն է եղել, ունենալով ցածր բազային մեծություն, ցույց տալ աճի ավելի բարձր տեսլեր: Այս հանգամանքը պարզվում է Հարավային Կովկասի երեք հանրապե-

տությունների ՀՆԱ-ների ցուցանիշների ուսումնասիրության արդյունքում: Այսպես, 1990թ.-ի համեմատությամբ 2000թ.-ին Վրաստանի ՀՆԱ-ի մեծությունը կազմել է 37.5%, 2004թ.-ին՝ 48.7%, 2008թ.-ին՝ 67.1%, 2013թ.-ին՝ 80.9%, 2017թ.-ին՝ 93%: Հայաստանի համար այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 2000թ.-ին՝ 64%, 2004թ.-ին՝ 99.9%, 2008թ.-ին՝ 156.7%, 2013թ.-ին՝ 159.3% և 2017թ.-ին՝ 183.3%, իսկ Ադրբեջանի համար՝ 47.5%, 58.9%, 89.3%, 210.0%, 262.0% և 264.4% (հաշվարկները կատարվել են Համաշխարհային բանկի կողմից մշակված համաշխարհային զարգացման ցուցանիշների հիման վրա): Նկատենք նաև, որ 1990թ.-ին նշված երեք երկրների ՀՆԱ-ների մեծությունները կազմել են՝ Հայաստանինը՝ 2.25 մլրդ ԱՄՆ դոլար, Ադրբեջանինը՝ 8.85 մլրդ ԱՄՆ դոլար և Վրաստանինը՝ 7.75 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 1990թ.-ին կազմել է՝ Հայաստանում՝ 637 ԱՄՆ դոլար, Ադրբեջանում՝ 1237 ԱՄՆ դոլար, Վրաստանում՝ 1614 ԱՄՆ դոլար: Ամենևին էլ չմերժելով այն հանգամանքը, որ Ռ.Քոչարյանի՝ նախագահության տարիներին ՀՀ-ում գրանցվել է տնտեսական աճ, սակայն կարծում ենք, որ դրա միջին տարեկան մեծությունը կազմել է ոչ թե 10.5%, այլ իրական տնտեսական աճը կազմել է տարեկան 4.15% (10.5 / 2.53), որտեղ 2.53-ը 1990թ.-ի՝ բազիսային տարվա համեմատ ՀՆԱ-ի շրջայակապ ինդեքսի նվազեցման մեծությունն է: Նշված հանգամանքի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել ՀՀ նախկին վարչապետ, պրոֆ. Հ.Ա. Բագրատյանը ՀՀ Ազգային ժողովի 5-րդ գումարման նստաշրջանում: Պրոֆեսոր Բագրատյանը նաև բերում է այսպիսի տվյալներ. 1990թ.-ին մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է Հայաստանում՝ 2950 ուրվի, Վրաստանում՝ 2750 ուրվի և Ադրբեջանում՝ 2060 ուրվի²: Այստեղից նա նույնպես եզրակացնում է, որ որպեսզի քոչարյանական

¹ Ռ. Քոչարյանը ՀՀ վարչապետ է նշանակվել 1997թ.-ի մարտի 14-ին, ՀՀ նախագահ է ընտրվել 1998թ.-ի ապրիլի 9-ին, իսկ նրա նախագահական երկրորդ ժամանակաշրջանն ավարտվել է 2008թ.-ի ապրիլին: Սակայն ելնելով այն հիմնադրույթից, որ ՀՀ նախագահի գործողությունների 60%-ն իրականացվում է նրա լիազորությունները ստանձնելուց վեց ամիս հետո, իսկ 100%-ը՝ մեկ տարի անց, այդ պատճառով էլ մեր հաշվարկներն իրականացվել են սկսած 1999 թվականից:

² Հաշվված է՝ Страны-члены СНГ в 1993г. Статистический ежегодник. Статкомитет СНГ. - М.: 1994, стр. 12-13.

քարձր աճը տեղավորվի ՀՆԱ-ի մեջ ՀՀ ԱՎԾ-ի պետը պարզապես իջեցրել է ՀՆԱ-ի 1990 թվականի բազան:

Այդուհանդերձ տվյալներից հետևում է, որ 2008թ.-ին 1999թ.-ի համեմատությամբ ՀՀ ՀՆԱ-ն (այդ թվում՝ բնակչության մեկ շնչի հաշվով) դրամական արտահայտությամբ ավելացել է 3.61 անգամ, դոլարային արտահայտությամբ՝ 6.32 անգամ: ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեքը 2008թ.-ին 1999թ.-ի համեմատությամբ կազմել է 57.2%: Հաջորդ եզրակացությունը, որը կարելի է կատարել այդուհանդերձ տվյալներից այն է, որ 2009 թվականին նախորդ տարվա համեմատությամբ նկատվել է ՀՆԱ-ի զգալի անկում, որը աշխարհի անկում գրանցած երկրների շարքում իր մեծությամբ երրորդն է: Հարց է առաջանում, ո՞րն է դրա պատճառը: Պատասխանը հայտնի է բոլորին՝ 2008թ.-ին սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի «ալիքները» Հայաստան հասան 2009 թվականին: Այստեղից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը. ՀՀ-ում ՀՆԱ-ի 1999-2008 թվականների զգալի աճը մեծապես կապված է եղել համաշխարհային տնտեսության վերելքի հետ և այն հիմնականում պայմանավորված է եղել արտաքին գործոններով, որը խաթարվել է հենց արտաքին գործոնի (համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի) հետևանքով: Երկրորդ եզրահանգումն այն է, որ 1999-2008 թթ. ընթացքում ՀՀ-ում ձևավորված տնտեսությունը և նրա կառուցվածքը չեն ունեցել կայունության և դիմադրողականության բավարար պաշար, և արտաքին ցնցումների պատճառով տնտեսությունը պարզապես փլուզվել է: Այլ կերպ ասած, վերը նշված տասնամյակում ստեղծվել է տնտեսության անարդյունավետ կառուցվածք, որն ուղղակի կախվածության մեջ է գտնվել արտաքին գործոններից, ու դրանցից թեկուզ մեկի պատճառով տնտեսության հավասարակշռությունը խախտվել է: Այդ են վկայում նաև համաշխարհային տնտեսության զարգացման ցուցանիշները, որոնց համաձայն համաշխարհային ՀՆԱ-ն 1999-2008 թթ.-ին կրկնապատկվել է (կամ ավելի ստույգ՝ աճել է 1.95 անգամ), 1999թ.-ին համաշխարհային ՀՆԱ-ի մեծությունը կազմել է 32.5 տրիլիոն ԱՄՆ դոլար, որը 2008թ.-ին հասել է 63.4 տրիլիոն ԱՄՆ դոլարի³: Անընդունելի է խոսել առանձին երկրում տնտեսական աճի ցուցանիշի

³ Տե՛ս <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD>

փոփոխությունների մասին՝ առանց դիտարկելու համաշխարհային միտումները և համեմատություններ անցկացնելու մյուս երկրներում նույն ցուցանիշի դինամիկայի հետ: Այդ նպատակով աղյուսակ 2-ում բերված է աշխարհում և մի շարք երկրներում ՀՆԱ-ի մեծությունների դինամիկան 1999–2009 թվականներին, որտեղ դիտարկված է աշխարհի ամենահզոր տնտեսություն ունեցող երկրի՝ ԱՄՆ-ի, Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների, ՀՀ-ի և նրա հարևան երկրների ՀՆԱ-ի մեծությունների փոփոխությունները: Այսինքն՝ հիմնականում այն երկրների, որոնք սերտ առևտրատնտեսական հարաբերություններ ունեն Հայաստանի Հանրապետության հետ:

Աղյուսակ 2-ի տվյալներից հետևում է, որ 1999–2008 թթ. ժամանակահատվածում տնտեսական աճի ամենաբարձր ցուցանիշներ ունեցող առաջին երեք երկրներն են՝ Ադրբեջանը, Ռուսաստանի Դաշնությունը և Ղազախստանը (որոնք հիմնականում վառելիքաէներգետիկ ռեսուրսներ արտահանող երկրներ են): Ինչ վերաբերում է մյուս երկրներին, ապա նրանց տնտեսական աճը նույնպես զգալի է եղել. Բելառուսը՝ 5 անգամ, Վրաստանը՝ 4.5, Դրոզգուսանը՝ 4.2, Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ 3.5, Թուրքիան՝ 2.9 անգամ: Այսինքն, այնպես չէ, որ մյուս երկրներում ուսումնասիրվող ժամանակահատվածում տնտեսական զգալի աճ չի գրանցվել, իսկ Հայաստանում այն կազմել է 6.4 անգամ: Այս տեսանկյունից առավել հետաքրքրական է, թե ուսումնասիրվող տասնամյակի զարգացման արդյունքում երկիրն ինչպիսի «ամրության» տնտեսություն է ունեցել:

Աղյուսակ 2-ի տվյալներից հետևում է, որ բերված երկրների շարքում ամենախոցելիին եղել է ՀՀ տնտեսությունը, քանի որ նախորդ տարվա համեմատությամբ 2009թ.-ին ՀՆԱ-ի անկման երկրորդ ամենաբարձր (Ռուսաստանի Դաշնությունից հետո, որտեղ անկումը կազմել է 26.4%) ցուցանիշն ունեցել է Հայաստանի Հանրապետությունը, այն կազմել է 25.9% (իսկ դրամական արտահայտությամբ 14.1%): Համեմատության համար նշենք, որ այդ նույն ժամանակահատվածում տեղի ունեցած ՀՆԱ-ի անկումը, օրինակ, Բելառուսում կազմել է 18.9%, Վրաստանում՝ 16.4%, Թուրքիայում՝ 15.6%, իսկ Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղի է ունեցել 101.97% ՀՆԱ-ի աճ: Բերված

միջազգային համադրություններից հետևում է, որ ինչպես հիմնական գործընկեր երկրների, այնպես էլ տարածաշրջանային մյուս երկրների համեմատությամբ ՀՀ տնտեսությունն ամենաքիչ դիվերսիֆիկացվածներից մեկն է:

Աղյուսակ 3-ում բերված է ՀՀ համախմբված բյուջեի ցուցանիշների շարժը 1999–2009 թվականներին: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ ՀՀ համախմբված բյուջեի եկամուտները 1999–2008 թթ. ժամանակահատվածում ավելացել են 4.2 անգամ, այդ թվում՝ հարկերի և տուրքերի մասով՝ 4.7 անգամ, այլ եկամուտների մասով՝ 3.0 անգամ: Բյուջեի ընդամենը ծախսերն աճել են 3.4 անգամ, իսկ պակասուրդը (դեֆիցիտը)՝ կրճատվել է կիսով չափ: Աղյուսակ 3-ի տվյալներից հետևում է նաև, որ ՀՀ համախմբված բյուջեի ծախսերի աճը (1999–2009 թթ.-ին 3.9 անգամ) ձեռք է բերվել ոչ միայն եկամուտների ավելացման (3.7 անգամ, և ոչ թե 8 անգամ, ինչպես պնդում է ՀՀ երկրորդ նախագահը) այլև բյուջեի պակասուրդի նշված ժամանակահատվածում 4.6 անգամ (1999թ.-ի 51667.2 մլն ՀՀ դրամից 2009թ.-ին պակասուրդը դարձել է 235889.1 մլն ՀՀ դրամ) աճի հաշվին: Այսինքն, հանրապետության զարգացման ոչ կայուն իրավիճակը դրսևորվեց նաև այն հանգամանքով, որ 2009թ.-ին 2008թ.-ի համեմատությամբ համախմբված բյուջեի եկամուտները նվազեցին 11.4%-ով, այդ թվում՝ հարկերը և տուրքերը՝ 13.1%-ով, այլ եկամուտները՝ 1.6%-ով, պաշտոնական դրամաշնորհներն ավելացան 42.9%-ով: Նույն ժամանակահատվածում բյուջեի ընդամենը ծախսերն ավելացան 14.2%-ով, իսկ համախմբված բյուջեի պակասուրդը՝ 786.8%-ով:

Հանրապետության համախմբված բյուջեի այդպիսի վիճակը լուրջ «նախադրյալներ» ստեղծեց փողի արժեզրկման համար (բավական է նշել, որ ՀՀ սպառողական գների ինդեքսը (համաթիվը) կազմել է 2008թ.-ին՝ 109.0% իսկ 2010թ.-ին՝ 108.2%, ինչը 2000–2017 թթ. սպառողական գների ինդեքսի ժամանակագրական շարքում ամենաբարձր ցուցանիշներն են եղել (տե՛ս աղյուսակ 4-ը):

Առաջ անցնելով նշենք, որ ամեն գնով տնտեսական աճի բարձր ցուցանիշներ «նկարելու» քաղաքական մարմնաջը շարունակվեց նաև 2009 թվականին տնտեսական ճգնաժամը «հարթահարելու» և հետագա

տարիներին աճի բարձր ցուցանիշներ ներկայացնելու համար: Այսպես, 2009թ.-ին տնտեսական անկման 14.1%-ին հաջորդեց 2010թ.-ի 2.2% տնտեսական աճը, որը տնտեսագիտության տեսանկյունից արտառոց և բացառիկ երևույթ էր և բնորոշ էր միայն տնտեսական աճի հայկական «հրաշքին», բանի որ, ինչպես վկայում է տնտեսագիտության տեսությունը, երբ որևէ երկրի ՀՆԱ-ն նվազում է T ժամանակամիջոցում, ապա ճգնաժամից առաջ գրանցված տնտեսական աճի ցուցանիշին հասնելու համար անհրաժեշտ է 3T ժամանակահատված: Այդպիսի աճի հիմնական «գործիքը» << դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի փոփոխությունն էր, կամ << դրամի արժեզրկումը, ինչը և գործի դրվեց 2009-2010 թվականներին, երբ 2008թ.-ի մեկ ԱՄՆ դոլարի 306.0 դրամ միջին փոխարժեքը 2009թ.-ին դարձավ 363.3 << դրամ, իսկ 2010թ.-ին՝ 373.7 << դրամ (տե՛ս աղյուսակ 5-ը): Այսինքն, երկրի զարգացման տնտեսական ցուցանիշները նորից «բաղաբականացվեցին» (երբ տեղի է ունենում ոչ թե իրական սպառողական բարիքների ավելացում՝ նյութա-իրային տեսքով, այլ պարզապես դրանց գների բարձրացում)՝ առանց հաշվի առնելու տնտեսական զարգացման հնարավորություններն ու իրողությունները:

Անդրադառնալով 1999-2009 թթ. ժամանակահատվածում << համախմբված բյուջեի համեմատական ցուցանիշներին (աղյուսակ 6) նկատենք, որ.

➤ եթե 1999թ.-ին համախմբված բյուջեի ընդամենը եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների հարաբերությունը ՀՆԱ-ին կազմել է 19.3%, ապա 2008թ.-ին՝ 22.4%, իսկ 2009թ.-ին՝ 22.9%, այսինքն համախմբված բյուջեի մուտքերի հավաքելիության աստիճանը եական փոփոխություններ չի կրել (2008թ.-ի փոփոխությունը 1999թ.-ի համեմատությամբ կազմել է 3.1 տոկոսային կետ), միջոցն այդ նույն ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճը կազմել է 3.6 անգամ, ինչը նշված ժամանակահատվածում հանրապետությունում ցածր արդյունավետ հարկային վարչարարության և բարձր սովետայինության հետևանք է: Ավելին, եթե ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ/ՀՆԱ հարաբերակցությունը զարգացող երկրներում միջին հաշվով կազմում է առնվազն 38-40%, ապա Հայաստանում ձևավորված նման ցուցանիշը վկայում է

չհավաքված եկամուտների (հիմնականում հարկերի և տուրքերի) պետության կողմից կարգավորման հանցավոր միջամտությամբ, ինչը բազմաթիվ բացահայտումների առիթ դարձավ 2018թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած «թավշյա», ոչ բռնի, ժողովրդական հեղափոխությանը հաջորդած հակակոռուպցիոն միջոցառումների համար, և որը մեկ անգամ ևս ապացուցեց այն հին պնդումը, ըստ որի՝ ցանկացած երկրում կոռուպցիան սնող հիմնական աղբյուրը սովետային տնտեսությունն է, պետությանը չվճարվող հարկերի և տուրքերի տեսքով.

➤ ինչ վերաբերում է << համախմբված բյուջեի ծախսերին, ապա նկատենք, որ ՀՆԱ-ի նկատմամբ դրա տեսակարար կշիռը 1999թ.-ի 23.4%-ից 2008թ.-ին կազմել է 23.2%, այսինքն այդ ցուցանիշը ոչ թե ավելացել, այլ նվազել է 0.2 տոկոսային կետով, ինչը մեկ անգամ ևս վկայում է, որ հանրապետության ՀՆԱ-ի աճը «չի կուտակվել» պետական բյուջեում և քաշխվել (ծախսվել) պետության և հասարակության կարիքների ու պահանջմունքների բավարարման համար: Ավելին, այդ միջոցները «նստել են» իշխանության բարձրագույն պաշտոնատար անձանց դրամական և դոլարային հաշիվներում, դարձել են առանձնատներ, ամառանոցներ և նման կարգի բաներ: Ուստի պատահական չէ նաև այն, որ ժողովրդի մեջ խոսվում է բարձրագույն պաշտոնատար անձանց ու նրանց զավակների միլիոնավոր, ինչպես նաև միլիարդների հասնող, ինչպես նաև արտահանված արտարժույթի մասին: Այս առումով նկատենք, որ արդարացված կարելի է համարել գործող իշխանությունների գործողությունները, որոնք ուղղված են << պետական բյուջե վերադարձնելու չվճարված հարկերն ու այլ դրամական միջոցները (եկամուտները):

Որպեսզի լիարժեք պատկերացում կազմենք << համախմբված բյուջեի եկամուտների, ծախսերի և դրանց շարժի (փոփոխությունների) վերաբերյալ, նորից դիմենք աղյուսակ 2-ում բերված երկրների կտրվածքով միջազգային համեմատություններին (տե՛ս աղյուսակներ 7 և 8-ը):

Աղյուսակ 8-ի տվյալներից հետևում է, որ, օրինակ, Վրաստանում ՀՆԱ-ի աճը նկատելիորեն նպաստել է կենտրոնական կառավարության ծախսերի ավելացմանը ՀՆԱ-ի կազմում (այն 2008թ.-ին 1999թ.-ի

նկատմամբ ավելացել է 15.4 տոկոսային կետով, կազմելով 25.9%), մինչդեռ ՀՀ-ում այդ նույն ժամանակահատվածում տեղի է ունեցել հակառակը՝ ՀՆԱ-ի կազմում կառավարության ծախսերը նվազել են 1.7 տոկոսային կետով, կազմելով 10.2%: Կենտրոնական կառավարության ծախսերի բաժինը ՀՆԱ-ում նշված ժամանակահատվածում աճել է նաև Ռուսաստանի Դաշնությունում (3.2%-ով), ԱՄՆ-ում (2%-ով) և Թուրքիայում (1%-ով):

Նկատենք նաև, որպեսզի ցույց տրվի երկրների կենտրոնական կառավարությունների ծախսերի մեծությունների ու ՀՆԱ-ի միջև եղած կապը, տնտեսագիտական հետազոտություններում և վերլուծություններում ընդունված է հարաբերակցել այդ ցուցանիշների աճի տեմպերը: Ըստ որում, որքան այդ հարաբերակցությունը մոտ է 1-ին կամ գերազանցում է 1-ը, այնքան արդյունավետորեն է բաշխվում ՀՆԱ-ն՝ կառավարության առջև դրված սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման նպատակով, դրանով իսկ ապահովելով կառավարությանը համապատասխան ռեսուրսներով: Այլ կերպ ասած՝ տնտեսական աճը ծառայում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Եվ ընդհակառակը:

Այսպես, կենտրոնական կառավարության վերջնական սպառման ծախսերի աճի մեծությունների և ՀՆԱ-ի աճի մեծությունների հարաբերակցության գործակիցը 1999–2008 թթ.-ին աշխարհի համար կազմել է 1.04 (202.9 / 195.1), այսինքն՝ աշխարհի մասշտաբով ՀՆԱ-ի մեկ տոկոսային կետով աճին համապատասխանում է կենտրոնական կառավարությունների վերջնական սպառման ծախսերի 1.04 տոկոսային կետով աճ: Այդ ցուցանիշները մեր կողմից ուսումնասիրվող երկրներում կազմել են համապատասխանաբար՝ ԱՄՆ-ում՝ 1.15, Ռուսաստանում՝ 1.22, Բելառուսում՝ 0.85, Ղազախստանում՝ 0.88, Ղրղզստանում՝ 0.89, Հայաստանում՝ 0.84, Վրաստանում՝ 2.43, Ադրբեջանում՝ 0.55, Թուրքիայում՝ 1.08 և Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ 0.85: Վերը ասվածից հետևում է, որ Հայաստանը գտնվում է շարքի ամենալավ երկրի՝ Վրաստանի (2.43) և ամենավատ ցուցանիշ ունեցող երկրի՝ Ադրբեջանի (0.55) ցուցանիշների միջև: Իսկ ընդհանուր առմամբ ՀՀ-ի համար այդ ցուցանիշն անարդյունավետ է, քանի որ այն 0.16 տոկոսային կետով փոքր է 1-ից, կամ՝ այլ կերպ ասած, ՀՆԱ-ի աճը ՀՀ-ում արդյունավետորեն չի ծառայել երկրի զարգացմանը:

Կարող է հարց առաջանալ, իսկ ո՞ւմ են ծառայել և ի՞նչ նպատակներ են հետապնդել 1999–2008 թթ. ընկած ժամանակահատվածում հանրապետությունում իրականացված բարձր մակարդակի մանիպուլյացիաները, քանի որ դրանք դժվար է գնահատել որպես տնտեսական քարեփոխումներ այն պարզ պատճառաբանությամբ, որ դրանք չեն ծառայել բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և պետության կարողությունների ու տնտեսական ներուժի հզորացմանը: Ասվածը ցույց տալու նպատակով դիմենք ազգային հաշիվների համակարգին և կազմենք աղյուսակ 9-ը:

Հանրության ներսում համախառն ներքին արդյունքի (հաճախ այն անվանում են նաև «տնտեսական կարկանդակ») բաշխումը հիմնականում իրականացվում է երեք կողմերի (քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտների) միջև՝ աշխատանքի տերերի (վարձու աշխատողներ), կապիտալի տերերի (կամ, ազգային հաշիվների համակարգի լեզվով՝ տնտեսության համախառն շահույթ և համախառն խառը եկամուտներ) և պետության (արտադրության և ներմուծման հարկեր և սուբսիդիաներ) միջև: Աղյուսակ 9-ի տվյալներից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները՝

- եթե աշխատանքի տերերի (վարձու աշխատողների) բաժինը ՀՆԱ-ում 2008թ.-ին 2000թ.-ի նկատմամբ ավելացել է 3 անգամ, ապա կապիտալի տերերինը (տնտեսության համախառն շահույթ և համախառն խառը եկամուտներ) 3.7 անգամ, իսկ պետության բաժինը՝ 4 անգամ: Այսինքն, նշված ժամանակահատվածում ամենից շատ տուժել են աշխատանքի տերերը: Այս համատեքստում նկատենք նաև, որ 2009թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հարվածեց բոլոր երեք խմբերին էլ՝ աշխատանքի տերերի եկամուտները 2009թ.-ին 2008թ.-ի համեմատությամբ նվազեցին 9.1%-ով, պետության եկամուտները՝ 16.6%, իսկ կապիտալի տերերինը՝ 13.1%-ով: Այսինքն՝ մեկ տարվա ընթացքում նկատվեց նշված երեք սուբյեկտների եկամուտների երկնիշ նվազում, ինչը նորից վկայում է, որ ՀՀ տնտեսությունը չի դիվերսիֆիկացված և լուրջ տնտեսական ու սոցիալական կորուստներ է կրում արտաքին ազդեցությունների հետևանքով:

վերը նշված փոփոխությունների պատճառով ՀՆԱ-ի բաղկացուցիչները կրել են ոչ միայն բացարձակ մեծությամբ, այլ նաև համեմատական ընդհանուր զգալի փոփոխություններ: Այսպես, եթե 2000թ.-ին վարձու շխատողների բաժինը ՀՆԱ-ի կազմում կազմել է 42.7%, պետությանը՝ 11.4%, իսկ կապիտալի տերերինը՝ 46.6%, ապա 2008թ.-ին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 37.2%, 13.0% և 50.0%, իսկ 2009թ.-ին՝ 38.4%, 12.3% և 49.4%: ՀՆԱ-ի նման ձևով բաշխման քաղաքականությունը հանգեցրել է կապիտալի տերերի մասնաբաժնի ավելացմանը ի հաշիվ հիմնականում աշխատանքի տերերի մասնաբաժնի: Իսկ եթե նկատի ունենանք, որ ՀՀ-ում վարձու աշխատողների բանակը հաշվվում է հարյուր հազարներով, իսկ կապիտալի տերերինը՝ շուրջ 10 հազարով, ապա ակներև կդառնա, որ քոչարյանական կառավարման ժամանակահատվածում ՀՀ-ում ձևավորվել է անարդար հասարակություն, ինչի հետևանքով նկատվել է բնակչության ինչպես բացարձակ, այնպես էլ համեմատական աղքատացում, այստեղից բխող բոլոր բացասական հետևանքներով՝ ցածր աշխատավարձ, գործազրկության բարձր աստիճան և որպես այդ երևույթների բացասական հետևանք՝ հարյուր հազարավոր մարդկանց արտագաղթ այլ երկրներ: Իսկ եթե նկատի ունենանք, որ քիչ թե շատ նորմալ համարվող երկրներում ՀՆԱ-ի 60-70%-ն է բաշխվում հոգուտ աշխատանքի տերերի, ապա ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական վիճակը կդառնա առավել ամբողջական և ազգային անվտանգությանը սպառնացող:

2. ՔՈՉԱՐՅԱՆԱԿԱՆ «ԱՃԻ» «ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ»

Այն ժամանակ, երբ ծաղիկը թաղար մտավ և թռչունը՝ վանդակ, երբ մարդիկ սովորեցին բանալիներ ու կողպեքի անցքեր պատրաստել, Սկսեցին քաղաքակիրթ ապրել կապիկները: Կապիկները, կապիկները ... իմ շրջապատի կապիկները:

Պարոյր Սևակի անբիպ գործերից

2.1. Շինարարությունը

Ինչպես վկայում են 1999-2010 թվականների մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները, տնտեսական աճի հիմնական շարժիչ եղել է շինարարությունը, որն էլ, ի դեպ, նշված ժամանակահատվածի զարգացման լոկոմոտիվն էր: Ընդհանուր առմամբ ՀՆԱ-ի աճի գործում տնտեսության այս կամ այն ճյուղի կարևորությունը և տեղը ցույց տալու նպատակով օգտագործվում է ՀՆԱ-ի կազմում տվյալ ճյուղի տեսակարար կշիռը և դրա փոփոխությունը որոշակի ժամանակահատվածում: Ըստ որում, եթե այդ բաժինը որոշակիորեն ավելանում է, ապա մեծանում է տվյալ ճյուղի նշանակությունը ՀՆԱ-ի ձևավորման գործում: Այդու կողմից կարող է հաշվարկվել ՀՆԱ-ի հավելանում այս կամ այն ճյուղի նպաստման չափը, որը նույնպես ընդթագրում է տնտեսության տվյալ ճյուղի դերը ՀՆԱ-ի հավելանի գործում: Աղյուսակներ 10-15-ում բերված են ՀՆԱ-ի արտադրության, դրա կառուցվածքի և իրական աճի տեմպերի վերաբերյալ տեղեկությունները՝ տնտեսության ճյուղերի կտրվածքով: Բերված տվյալներից հետևում է, որ ուսումնասիրված ժամանակահատվածում շինարարության բաժինը ՀՀ ՀՆԱ-ի արտադրության կառուցվածքում շեշտակիորեն աճել է: Այսպես, եթե 1999թ.-ին ՀՀ ՀՆԱ-ում շինարարության բաժինը կազմել է 5.7%, ապա այն իր զագաթնակետին է հասել 2008թ.-ին՝ ՀՆԱ-ում կազմելով 25.3% (շինարարության տեսակարար կշիռն այդ տարիներին աճել 4.4 անգամ), ինչը մյուս ճյուղերի համեմատությամբ աճի ամենաբարձր ցուցանիշն է: Ավելին է, որ շինարարության մեջ զգալի ֆինանսական, նյութական, աշխատանքային



ոնտուրսների ներգրավումը զգալիորեն նվազեցրել է տնտեսության մյուս ճյուղերի զարգացման հնարավորությունները, որի հետևանքով ՀՆԱ-ի կազմում նվազել է դրանց տեսակարար կշիռը: Օրինակ, եթե 1999թ.-ին արդյունաբերության բաժինը ՀՆԱ-ում կազմել է 28.7%, ապա 2008թ.-ին՝ 13.3% (աղյուսակ 15): Հինարարության նման առաջանցիկ տնայնորով աճը կանխորոշել է նաև ՀՆԱ-ի հավելածի մեծ մասի ձեռքբերումը (տե՛ս աղյուսակ 14-ը՝ ՀՆԱ-ի հավելածին նպատման չափը): Այսպես, եթե 1999թ.-ին շինարարության նպատման չափը ՀՆԱ-ի աճին կազմել է -0.2, իսկ 2008թ.-ին՝ 2.7%, ապա 1999թ.-ից 2008թ.-ն ընկած ժամանակահատվածում այդ ցուցանիշը շինարարության ճյուղի համար եղել է ամենաբարձրը՝ օրինակ 2006թ.-ի 13.2%-անոց ՀՆԱ-ի աճի կեսից ավելին (7.4 տոկոսային կետով) աճը ապահովվել է շինարարության աճի հաշվին:

Անընդունելի է ՀՀ նախկին նախագահ՝ Ռ.Քոչարյանի այն պնդումը, որ իր նախագահության ընթացքում ՀՀ ՀՆԱ-ի մեծությունն ավելացել է հինգ անգամ և 2008թ.-ին հասել 11.662 մլրդ ԱՄՆ դոլարի, քանի որ այդ աճի 75-80%-ը ձեռք է բերվել շինարարության աճի հաշվին, որն ամենակին էլ չի ծառայել բնակչության սոցիալական խնդիրների լուծմանն ու կենսամակարդակի բարձրացմանը: Ընդհակառակը, հանրապետության զարգացման համար անհրաժեշտ արտադրական կապիտալի աղյուծի բաժինը կուտակելով միայն մեկ ճյուղում՝ շինարարությունում (նկատենք, որ այս ոլորտը արտահանելի արտադրանք չի թողարկում) ՀՀ տնտեսությունը դարձավ մենաշնորհային մեկ ճյուղի «գերին», որի կործանարար հետևանքը դրսևորվեց 2009թ.-ի համաշխարհային ճգնաժամի ընթացքում, երբ ՀՀ ՀՆԱ-ի անկումը կազմեց 14.1%, որն աշխարհում երրորդ ամենավատ ցուցանիշն էր: Այդպիսի անկման 75-80%-ը պայմանավորված էր շինարարության ոլորտի ֆինանսավորման դադարեցմամբ: Այդ տարիներին ՀՀ-ում շինարարությունում ներդրված ֆինանսական միջոցների միայն 7%-ն է իրականացվել բանկային հատվածի ֆինանսավորմամբ, շինարարությունում կատարվող ներդրումների մնացած մասն իրականացվել է անհայտ ծագմամբ ֆինանսական միջոցների հաշվին: Բացի այդ, շինարարությունում ներդրված կապիտալը, վերը նշված ճգնաժամի պատճառով դարձավ «անավարտ» (այսինքն՝ այն չէր ապահովում որևէ օգտակար էֆեկտ, որից կշահեին ոչ միայն պետությունը՝

բնակարանների իրացման արդյունքում համապատասխան ավելացված արժեքի, շահութահարկի, եկամտային հարկի մուտքերի ձեռով, այլև բնակչությունը, ինչպես նաև ՀՀ տնտեսության մյուս ոլորտները, որոնք չունեցան կամ զրկվեցին զարգացման, ներդրումների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից):

Այսպես կոչված «քոչարյանական» զարգացման ընթացքում ՀՀ տնտեսությունն ունեցավ ամենամեծ դեֆորմացված կառուցվածքը, ինչը թույլ չտվեց հասնել սոցիալ-տնտեսական զարգացման ապահովման հիմնական նպատակին՝ առավելագույն ավելացված արժեքի ստացումը: Այլ կերպ ասած, այդ ժամանակահատվածի տնտեսական աճը ամենին էլ ներառական չէր (ներառականը այնպիսի տնտեսական աճն է, որն արդարացիորեն է բաշխվում հանրության անդամների միջև և հնարավորություններ է ստեղծում քորրի համար), այլ ճիշտ հակառակը՝ դրանից հարստացավ միայն «շինարարական մաֆիան»: Ավելին, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, խոշոր քաղաքների կենտրոններում իրականացվող շինարարությունից հատկապես շահում է քաղաքի բյուջեն՝ քաղաքային հողային ռեստայի բարձր արժեքի հաշվին (որը հատկապես բարձր է մայրաքաղաքների և քաղաքների կենտրոնների համար, այն էլ՝ Հայաստանի նման սակավահող երկրներում), մինչդեռ երևան քաղաքի բյուջեն այդպիսի միջոցներ չի «վաստակել», թեև ՀՀ երկրորդ նախագահը երևանի նախկին քաղաքապետ Ա. Բազեյանին հիշեցնում էր, որ քաղաքային իշխանությունը «նստած է հարստության վրա», ուստի պետությունից միջոցներ չպետք է պահանջի:

Ամփոփելով այս մասը նշենք, որ քոչարյանական տխրահրջակ զարգացման ժամանակահատվածի վերջում (2008թ.-ին) շինարարության բաժինը ՀՀ ՀՆԱ-ում հասավ աննախադեպ չափերի՝ 25.3%-ի, այն դեպքում, երբ միջազգայնորեն ընդունված նորմալ է համարվում ՀՆԱ-ի կազմում շինարարության բաժնի 8-9%: Ավելին է նաև, որ երկար ժամանակահատվածում ՀՀ-ում չի ստեղծվել ազգային հարստության և ոչ մի բաղկացուցիչ, ավելին՝ այն մտխվել է, ազգային հարստությունը չավելացնելով և ոչ մի դրամով:

Մյուս կարևոր հարցը, որը պետք է դիտարկվի շինարարության ոլորտի աճը քննարկելիս, դա այն է, թե ի՞նչ միջոցների հաշվին է

իրականացվել շինարարությունը 1999–2008 թվականներին: Բնակարանային շինարարությանը (որը գերակշիռ մաս է կազմում ՀՀ-ում շինարարության ընդհանուր ծավալի մեջ) վերաբերող տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել (աղյուսակներ 16–19), որ ուսումնասիրվող ժամանակահատվածում շինարարությունն իրականացվել է գերազանցապես բնակչության ֆինանսական միջոցների ներգրավմամբ և այդ միջոցների հաշվին: Այսպես, մյն ՀՀ դրամով հաշվարկված բնակարանային շինարարության ֆինանսավորման մեջ բնակչության միջոցները 1999–2008 թթ.-ին կազմել են միջին հաշվով 86.0% (աղյուսակ 17), իսկ քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հաշվարկված՝ 71.8% (աղյուսակ 19): Այդ ժամանակահատվածում շինարարության ֆինանսավորման մյուս քիչ թե շատ նշանակալի աղբյուր են եղել մարդասիրական օգնությունը (որոշ տարիներին) և կազմակերպությունների ֆինանսական միջոցները, որոնք մասնաբաժինը միջին հաշվով կազմել է, համապատասխանաբար՝ 6.4%՝ մյն ՀՀ դրամով հաշվարկված և 8.2%՝ քառակուսի մետր ընդհանուր մակերեսով հաշվարկված (աղյուսակներ 17 և 19-ը): Պետական բյուջեից կատարվող ֆինանսավորումը էական մաս չի կազմել, ավելին, եթե 1999թ.-ին այն կազմում էր շինարարության ֆինանսավորման աղբյուրների 10%-ը (իսկ պետական բյուջեում այդ թվերը նախատեսվել էին դեռևս 1998թ.-ին՝ բյուջեի նախագծման ժամանակ), ապա մինչև 2008թ.-ն ընկած ժամանակահատվածում բնակարանային շինարարության բյուջետային ֆինանսավորումը հասցվել է նվազագույնի՝ 2001–2008 թթ.-ին միջին հաշվով կազմելով 1.4% (իսկ 2008թ.-ին կազմել է 1.3%):

Այսինքն, ՀՀ երկրորդ նախագահը ամենևին էլ հիմք չի ունեցել պնդելու, որ նշված ժամանակահատվածում իրականացված շինարարությունը եղել է «իր շնորհիվ»: Նման պնդումն արդարացված կլիներ միայն այն դեպքում, եթե շինարարության առյուծի բաժինը իրականացվեր ՀՀ պետական բյուջեի միջոցների, այլ ոչ թե ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին: Եթե ՀՀ-ում շինարարության առյուծի բաժինը իրականացվել է ՀՀ բնակչության, տնտեսավարող սուբյեկտների և դրսի կազմակերպությունների միջոցների հաշվին, ապա դրանք և

դրանց միջոցով ձևավորված աճը իրեն (նախկին ՀՀ նախագահին) վերագրելը ոչ միայն անընդունելի է, այլև անհիմն ու ծիծաղելի:

Մյուս կողմից, տնտեսության զարգացումը կապելով մեկ ճյուղի զարգացման հետ լուրջ սպառնալիքներ է առաջացնում տնտեսության հետագա զարգացման համար, եթե ֆինանսավորման այդ աղբյուրները անկայուն են և ենթարկվում են որոշակի ռիսկերի: Առավել ևս, երբ դրանք (ֆինանսական միջոցները) արտաքին ծագում ունեն: Հենց այդպես էլ պատահեց ՀՀ տնտեսության հետ 2009թ.-ին՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով, երբ ՀՀ ՀՆԱ-ի 14.1%-անոց անկման 76.0%-ը պայմանավորված էր շինարարության անկմամբ: Սա կարելի է բնորոշել որպես ՀՀ տնտեսությանը շինարարության անկման պատճառով հասցված կարճաժամկետ էֆեկտ:

Սակայն տնտեսության կառուցումը և զարգացումը մոնո-ճյուղի հիման վրա ունեցել է նաև երկարաժամկետ ազդեցություն, որի «էֆեկտը» զգացվում է մինչև օրս:

Խոսքն այն մասին է, որ հսկայական միջոցների կուտակումը շինարարությունում տնտեսության մյուս ճյուղերին զրկել է զարգացման այդ ռեսուրսներից, ինչի հետևանքով էլ դժվարացել է ինչպես տնտեսության առանձին ոլորտների, այնպես էլ ամբողջ տնտեսության վերարտադրական նորմալ գործընթացը: Այս տեսանկյունից ամբողջովին կարելի է համաձայնվել տնտեսագետներից մեկի կարծիքի հետ, որի օրինակը հետևյալն է՝ ասենք, դուր պետք է անցնեք 15 կմ ճանապարհ և Ձեր միջին արագությունը (կամ, պայմանականորեն ասած՝ ձեր պոտենցիալը) 3 կմ/ժամ է: Այսինքն՝ նորմայից չեղելով դուք 15 կմ-ն կանցնեք 5 ժամում և առանց խնդիրների կշարունակեք ձեր ճանապարհը՝ անցնելով հաջորդ 15, 20 կամ 30 կմ-ն՝ կախված ձեր թիրախներից: Հիմա, ենթադրենք, ճամփա ընկնելուց կարճ ժամանակ անց դուք ստիպված եք լինում վազել: Ընդ որում, պատճառը ձեզանից կախված չէ, ասենք, ճամփեզրի տներից մեկից ձեզ վրա է հարձակվել մի շուն: Զարգացնում ենք 10–15 կմ/ժ արագություն:

Սակայն պարզ է, որ երկար չեք կարող շարունակել, ձեր օրգանիզմը նման արագությունների սովոր չէ: Դրա համար կարճ ժամանակ անց կանգ եք առնելու և շունչը ետ քերեք: Սա՛ լավագույն դեպքում: Իսկ

վատագույն դեպքում չի բացառվում՝ լուրջ առողջական խնդիր ձեռք բերելը և կիսատ թողնելով ճանապարհը՝ զբաղվեք բուժումներով: Լույսը տնտեսության դեպքում է:

Կառավարությունն այսօր ասում է, որ 2000-ականների վերջին Հայաստանի երկնիչ տնտեսական աճն իր պոտենցիալից բարձր էր (տե՛ս գծապատկերը):

Պատկերավոր ասած, տնտեսությունն ավելի արագ էր «վազում», քան նրա հնարավորություններն էին՝ պայմանավորված պղնձի գների և արտերկրից եկող դրամական փոխանցումների աճով, և այլն: Աճը, այսպիսով, արհեստական էր, և տնտեսական օրգանիզմը «գերտաքացել» էր: Հետևանքը եղավ այն, որ 2009 թվականին այդ տնտեսությունը չկարողացավ դիմակայել ցնցումներին և շատ խորը՝ 14.1%-անոց (դոլարային համարժեքով 25.9%) անկում ապրեց: Անցնենք առաջ՝ շարունակելով մեր օրինակը:

Վազելու հետևանքով ուժասպառ լինելուց հետո սկսում եք ավելի դանդաղ քայլել. և՛ ի վիճակի չեք արագ ընթացքի, և՛ վախենում եք կրկին վատանալ: Դրան էլ գումարած՝ ճանապարհը լավը չէ, տեսանելիություն չկա, լիքը խոչընդոտներ են, և այլն: Ու ձեր արագության պոտենցիալը կամաց-կամաց նվազում է՝ նախկին 3 կմ/ժ-ից՝ նախ հասնելով 2.5-ի, հետո՝ 2 կմ/ժ-ի:

Ու դուք սկսում եք ետ ընկնել ձեր մրցակիցներից: Սա էլ այն է, ինչ տեղի է ունեցել մեր տնտեսության հետո՝ ճգնաժամից հետո: «Վերջին մի քանի տարիներին Հայաստանի տնտեսությունը քնուկազրկվում է արտաքին աշխարհից ներթափանցող բացասական ցնցումներով, որի արդյունքում գրանցվել է տնտեսական աճի ցածր մակարդակ՝ աստիճանաբար նվազեցնելով տնտեսական աճի ներուժը»,- ԱԺ-ի իր ելույթում ասել է վարչապետ Կարեն Կարապետյանը: Ավելին, ոչ միայն ներուժն է թուլացել, այլև դուք ձեր ներուժից էլ պակաս արագություն եք զարգացրել: Դուք կարող էիք ժամում 2 կմ անցնել, սակայն վերջին շրջանում բավարարվել եք 1 կմ անցնելով՝ ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված: 2016 թվականին, օրինակ, տնտեսությունն իր ներուժից ցածր է գտնվել:


Ըստ ՀՀ Ֆինանսների նախարարության գնահատականների՝ 2016 թվականին իրական ՀՆԱ-ի պոտենցիալը կազմել է 3 տրիլիոն 447 մլրդ, սակայն փաստացի ունեցել ենք 3 տրիլիոն 359 մլրդ դրամ իրական ՀՆԱ: Այսինքն՝ մեր տնտեսությունն իր պոտենցիալից 2.3%-ով քիչ է եղել (դա անվանում են ՀՆԱ-ի բացասական ճեղք): Այս ամենը ներկայացված է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմված ստորև բերված գծապատկերում՝ 2000–2020 թթ. ժամանակահատվածի համար:

ՀՀ կառավարությունը խոստացել է ավելացնել տնտեսական աճի ներուժը. զարգացնել ենթակառուցվածքները, բարելավել բիզնես միջավայրը, օրենսդրությունը, և այլն, որպեսզի առաջիկա տարիներին 5–6% տնտեսական աճը լինի ոչ թե նորմայից բարձր, այլ նորմայի մեջ: Դրա համար էլ կառավարությունը 2016 թվականի բյուջեում արդեն «աշխատեցրել է» կապիտալ ծախսերի ավելացման մոտեցումը:

2018 թվականին պետբյուջեի կապիտալ ծախսերը կրկնապատկվելու են՝ 2017 թվականի բյուջեով հաստատվածի համեմատ. եթե 2017 թվականի պետական բյուջեով նախատեսվում էր 98.6 մլրդ ՀՀ դրամի կապիտալ ծախսերի իրականացում, ապա 2018թ.-ին՝ 172.4 մլրդ: Կառավարության համոզմամբ՝ հենց կապիտալ ծախսերն են ավելացնելու տնտեսական աճի ներուժը ու երկարաժամկետ հեռանկարում կայուն աճ ապահովելու: Ու այդ ժամանակ արդեն հնարավոր կլինի հանգիստ խլճով ավելացնել թոշակներն ու աշխատավարձերը՝ առանց վախենալու, որ բյուջեն կարող է խնդիրներ ունենալ: Ահա սա է բյուջեի ամենակարևոր մեխիզը:

Գծապատկեր

ՀՀ իրական ՀՆԱ-ի և ՀՆԱ-ի ճեղքի պատկերը 2000–2020 թթ.-ին



Ճիշտ մոտեցում է սա, թե՛ սխալ: Կապիտալ ծախսերի ավելացումն արդյոք սպասված էֆեկտը կտա՞, թե՛ ոչ: Արդյոք շեշտը պետք է դնել պետությունից հաշվին կապիտալ ծախսերի՞ վրա, թե՛ հիմքում պետք է լինեն մասնավոր ներդրումները: Արանք կարևոր հարցեր են:

Մինչդեռ չի կարելի բացառել, որ բավականին կոշտ արձագանք լինի ՀՀ նախորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գրասենյակի և նրա օրոք տնտեսական բյուրոյի ղեկավարած թիմի կողմից: Չէ՞ որ ներկայիս կառավարությունն արդեն բաց տեքստով, պաշտոնապես, մասնագիտորեն ու գրաֆիկների միջոցով հայտարարում է, որ 2000-ականների վերջի երկնիշտ տնտեսական աճն «անոմալիա» էր, որով հպարտանալ չի կարելի⁴:

Նկատենք նաև, որ շինարարությունը համարվում է տնտեսության հիմնական միջոցներ ստեղծող ոլորտ, ինչը նպաստում է համախառն կուտակմանը: Սակայն այն գործնականում ունի իր բնականոն սահմանները, ինչը խախտվելու դեպքում խաթարվում են տնտեսական բազմաթիվ օրինաչափություններ, մասնավորապես՝ ապառաման և կուտակման

հարաբերակցությունը, տնտեսական աճի տեմպերը և այլն: Ակնհերև է, որ ՀՀ-ում տնտեսության համախառն կուտակման հարաբերությունը ՀՆԱ-ին 2000թ.-ից 2008թ.-ն ընկած ժամանակահատվածում նկատելիորեն աճել է, որը սակայն հետագա տարիներին նկատելիորեն կրճատվել է՝ 2016թ.-ին հասնելով իր նվազագույն մեծությանը: Այդ մասին են վկայում ՀՀ-ում կուտակման նորմայի (համախառն կուտակման հարաբերությունը ՀՆԱ-ի մեծությանը) հետևյալ ցուցանիշները՝ 2000թ.-ին՝ 18.6%, 2001թ.-ին՝ 19.8%, 2002թ.-ին՝ 21.8%, 2003թ.-ին՝ 24.3%, 2004թ.-ին՝ 23.9, 2005թ.-ին՝ 30.5, 2006թ.-ին՝ 35.9%, 2007թ.-ին՝ 37.8%, 2008թ.-ին՝ 40.9%, 2009թ.-ին՝ 34.7%, 2010թ.-ին՝ 32.9%, 2011թ.-ին՝ 27.3%, 2012թ.-ին՝ 25.3%, 2013թ.-ին՝ 22.3%, 2014թ.-ին՝ 20.9%, 2015թ.-ին՝ 20.7% և 2016թ.-ին՝ 18.4%⁵:

Հանրապետության տնտեսությունում ստեղծված իրերի նման վիճակը հանգեցրեց ներդրումների, և հատկապես՝ արտաքին, նկատմամբ պահանջարկի զգալի մեծացման ու դրանցից կախվածության զգալի աճի:

2.2. Անձնական (անհատական) դրամական փոխանցումները

Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներին և հետագա տարիներին շարունակվող տարածաշրջանային (հատկապես՝ հարևան երկրի հետ ռազմական հակամարտությունը) անկայուն, ինչպես նաև հանրապետությունում ձևավորված բարդ և ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի պատճառով նկատվեց բնակչության զգալի արտագաղթ: Այս հանգամանքը Հական ազդեցություն ունեցավ հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Խոսքն ամենից առաջ վերաբերում է արտագաղթած ՀՀ քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետություն կատարված զգալի մեծությունների հասնող անձնական (անհատական) դրամական փոխանցումներին: Աղյուսակներ 20 և 21-ում բերված են ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը տարեկան փոխանցումների մասին

⁴ Տե՛ս Բաբկյան Թունյան, «Աճի ներքո», Բյուջե 2018-ի գլխավոր մեխիզմներից մեկը», <https://168.am/2017/11/01/863282.html>

⁵ Շարքը հաշվարկվել և կազմվել է համապատասխան տարիների Հայաստանի վիճակագրական տարեգրքերի տվյալների հիման վրա, տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական www.armstat.am կայքում՝ «Տարեգրքեր» բաժնում:

տեղեկությունները՝ 2004–2017 թվականների համար, ինչպես նաև՝ ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները 2006–2017 թվականներին:

Աղյուսակ 22-ում բերված են ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումների մասին տեղեկությունները՝ 2004–2011 թվականների համար, ինչպես նաև այդպիսի փոխանցումների տոկոսային փոփոխությունները՝ նախորդ տարվա համեմատ, որոնք վկայում են մինչև 2009 թվականը ընկած ժամանակահատվածում ֆիզիկական անձանց կողմից դեպի ՀՀ կատարվող դրամական փոխանցումների անընդհատ աճի մասին: Որպես համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքներից մեկը 2009թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ ֆիզիկական անձանց փոխանցումները (ներհոսքը) նվազեցին շուրջ 700 մլն ԱՄՆ դոլարով, ինչը զգալի մեծություն էր կազմում ամբողջ ներհոսքի մեջ: Թեև 2010թ.-ին փոխանցումների ծավալն ավելացավ, սակայն այն ավելի պակաս էր նախաճգնաժամային 2007թ.-ի փոխանցումների ծավալի համեմատ:

Միաժամանակ նկատենք, որ արտերկրից Հայաստանի Հանրապետություն փոխանցված անձնական (անհատական) դրամական միջոցները ՀՀ պետական քյուբեի ընդամենը եկամուտների համեմատությամբ զգալի մեծություններ են կազմել: Այսպես, 2004թ.-ին անձնական (անհատական) դրամական միջոցների ներհոսքի և արտահոսքի տարբերությունը՝ զուտ ներհոսքի հարաբերությունը քյուբեի ընդամենը եկամուտներին կազմել է 39.0%, 2005թ.-ին՝ 35.8%, 2006թ.-ին՝ 35.3%, 2007թ.-ն՝ 35.85, 2008թ.-ին՝ 43.7% և նույնիսկ ճգնաժամային 2009թ.-ին՝ 42.0%: Նկատենք նաև, որ ինչպես իրավացիորեն նշում են քազմաթիվ փորձագետներ, անձնական (անհատական) փոխանցումներ դեպի ՀՀ իրականացվում են ոչ միայն բանկային համակարգի միջոցով: Այս՝ ոչ բանկային փոխանցումների ճանապարհով, հանրապետություն մուտք եղած անձնական (անհատական) դրամական փոխանցումները գնահատվում են բանկային համակարգով կատարված փոխանցումների 20-ից 40%-ի չափով: Այլ կերպ ասած՝ վերը բերված թվերն իրականում ավելի մեծ են:

Պարզից էլ պարզ է, որ անձնական (անհատական) դրամական փոխանցումների գործում ՀՀ երկրորդ նախագահը ոչ մի մասնակցություն էլ չի ունեցել, այլ ընդհակառակը՝ արտերկրից փոխանցված դրամական միջոցները կայունացրել են սպառողական ներքին շուկան, ավելացրել են քնակշիռության կողմից պետական քյուբե վճարվող հարկերն ու տուրքերը, և դրանով իսկ ապահովել հանրապետության սոցիալ-տնտեսական բնականոն զարգացման կարևոր մասը: Եվ այդ ամենի համար պարտական ենք, ոչ թե ՀՀ երկրորդ նախագահին, այլ հայրյուր հազարավոր մեր այն հայրենակիցներին, ովքեր տնից-տեղից կտրված «օտար ավերում բախտ որոնելով» կարողացել են վաստակել և հոգալ ինչպես իրենց, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ապրող իրենց հարազատների ու բարեկամների հանապազօրյա հացը:

2.3. Բնակչության զբաղվածությունը

Ներկայումս ընդունված է, որ տնտեսական քաղաքականության նպատակը աշխատատեղերի ստեղծումն է՝ կայուն ինֆլյացիայի պայմաններում: Սա նշանակում է, որ այլ հավասար պայմաններում, եթե ստեղծվում են զգալի թվով աշխատատեղեր (կայուն ինֆլյացիայի պայմաններում), ապա ձեր վարած տնտեսական քաղաքականությունը կարելի է համարել հաջողված: Այս խնդրի լուծման համար անկասկած է երկրում վարվող ձեռնարկատիրական և ներդրումային կլիմայի բարելավման կարևորությունը, ինչպես նաև պետության կողմից կարգավորման այլ գործիքների կիրառումը: Ավաճող նշանակում է, որ հասարակության նյութական և հոգևոր բարիքների ավելացման գործում կարևոր է տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի ավելացումը, ինչը նշանակում է նաև ընդլայնված վերարտադրության ապահովում՝ էքստենսիվ ճանապարհով:

Տնտեսության առանձին ոլորտներում զբաղվածների թվաքանակը ՀՀ-ում 1997–2009 թթ.-ն ընկած ժամանակահատվածում բերված է աղյուսակ 23-ում, իսկ դրա կառուցվածքը՝ աղյուսակ 24-ում:

Աղյուսակ 23-ի տվյալներից հետևում է, որ 1997–2008 թթ.-ին զբաղվածների թվաքանակը նվազել է 254.6 հազար մարդով կամ 18.6%-ով: Նույն քանակությամբ աշխատող ձեռքեր համալրել են գործազուրկների

բանակը կամ էլ բռնել են պանդխտության ճանապարհը: Ոստմնասիր-վող ժամանակահատվածում գյուղատնտեսական ոլորտում զբաղվածների թվաքանակը կրճատվել է 70.7 հազար մարդով կամ 12.5%-ով, իսկ ոչ գյուղատնտեսական ոլորտներում զբաղվածներինը՝ 183.9 հազար մարդով կամ 22.8%-ով: Ըստ որում, արդյունաբերությունում և ծառայությունների ոլորտներում այդ ցուցանիշների նվազումները կազմել են համապատասխանաբար՝ 101.3 հազար և 44.3% ու 83.4 հազար և 16.1%, իսկ շինարարությունում զբաղվածների թվաքանակն ավելացել է 0.7 հազար մարդով:

Ընդհանուր առմամբ, թեև շինարարության ոլորտում նկատվել է զբաղվածների թվաքանակի ավելացում, սակայն դրա տեսակարար կշիռը 1997–2008 թթ.-ին տնտեսությունում զբաղվածների ընդհանուր կազմում ավելացել է ոչ էական չափով՝ 1997թ.-ի 4.4%-ից 2008թ.-ին հասնելով 5.4%-ի (աղյուսակ 24):

Նկատենք նաև, որ 2009թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամն ամենամեծ հարվածը հասցրեց շինարարությունում զբաղվածներին, ինչի հետևանքով այդ ոլորտում զբաղվածների թվաքանակն ունեցավ ամենամեծ անկումը՝ 2009թ.-ին 2008թ.-ի համեմատ կրճատվեց 0.9 տոկոսային կետով՝ 2009թ.-ին կազմելով ընդհանուր զբաղվածների 4.5%-ը:

Ինչպես նշեցինք վերևում, թեև ՀՆԱ-ի կառուցվածքում շինարարության բաժինը 2008թ.-ին կազմել է 25.9%, սակայն բնակչության զբաղվածության ավելացման տեսանկյունից այդ ազդեցությունը ոչ համաչափ է եղել: Նկատենք նաև, որ 1997–2008 թթ. ժամանակահատվածում զբաղվածների կրճատված թվաքանակի մեծ մասը (շուրջ 40%-ը կամ 101.3 հազար մարդը) բաժին է ընկել արդյունաբերությանը՝ դրանով իսկ ապարդյունաբերականացվել է ՀՀ տնտեսությունը:

Բնակչության զբաղվածության քաղաքականության վերլուծության և գնահատականների տեսանկյունից զգալի հետաքրքրություն է ներկայացնում ըստ զբաղվածության կարգավիճակի զբաղվածության ուսումնասիրությունը:

Համաձայն ընդունված սահմանման զբաղված է համարվում անձն, ով դիտարկվող ժամանակահատվածում.

- ▶ ունեցել է վարձու կամ ոչ վարձու աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական,
- ▶ ժամանակավորապես տարբեր պատճառներով բացակայել է աշխատանքից,
- ▶ զբաղված է եղել տնային կամ գյուղացիական տնտեսությունում, իսկ արտադրված արտադրանքը նախատեսված է եղել լրիվ կամ մասնակի իրացման, կամ սեփական վերջնական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է կազմել տնային տնտեսության սպառման մեջ:

Զբաղվածներն ըստ կարգավիճակի դասակարգվում են վարձու և ոչ վարձու աշխատողների:

Վարձու աշխատողն անձն է, ով աշխատում է գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում է դրամական և (կամ) բնաիրային փոխհատուցում՝ աշխատավարձ:

Ոչ վարձու աշխատողն անձն է, ով իրեն ինքնուրույնաբար է ապահովում եկամտաբեր տնտեսական գործունեությամբ և զբաղված է սեփական գործում (բիզնեսում), կայացնում է արտադրական որոշումներ կամ լիազորում է այլ անձի (անձանց), գործունեությունն իրականացնում է վարձու աշխատողների ներգրավմամբ կամ առանց վարձու աշխատողների:

Ոչ վարձու աշխատողներն ըստ կարգավիճակի թվարկված են ստորև:

- ▶ Գործատուն անձն է, ով ինքնուրույնաբար կամ մեկ կամ մի քանի գործընկերների հետ միասին ղեկավարում է սեփական բիզնեսը և մշտապես վարձում է մեկ կամ ավելի աշխատողներ:
- ▶ Ինքնազբաղվածն անձն է, ով զբաղված է եկամտաբեր գործունեությամբ ինքնուրույնաբար՝ առանց աշխատողների ներգրավման, եթե նույնիսկ ներգրավում է աշխատողներ, այն չի կրում մշտական բնույթ (օրինակ, գյուղացիական տնտեսություն վարող անձը սեզոնային աշխատանքների համար կարող է որոշակի աշխատանքներ

կատարելու համար ժամանակավորապես ներգրավել վարձու աշխատուժի⁶:

Այդուհաս 25-ի տվյալներից հետևում է, որ 2002–2009 թթ.-ին ՀՀ տնտեսությունում ինքնագաղվածներն եղել են ընդամենը զբաղվածների կեսից ավելին, և հետագա տարիներին այդ ցուցանիշն ունեցել է աճման միտում, ինչը նշանակում է, որ այդ մարդիկ ինքնուրույնաբար են ստեղծել իրենց աշխատանքը, որի հետ ՀՀ երկրորդ նախագահին առնչություն չունի: Այլ կերպ ասած, եթե ընդունենք այն մտեցումը, ըստ որի տնտեսական քաղաքականության նպատակն աշխատատեղերի ստեղծումն է կայուն ինֆլյացիայի պայմաններում, ապա կարելի է հաստատապես պնդել, որ 2002–2009 թթ.-ին այդպիսի քաղաքականությունը բացակայել է:

Շեռաքրքիր է նաև նշել, որ 2008թ.-ին ՀՀ-ում գործատուների թվաքանակը կազմել է 4.9 հազար մարդ, իսկ 2009թ.-ին՝ 6.3 հազար մարդ (այդուհասկ 26):

2.4. Արտաքին առևտուրը և երկրի համեմատական առավելությունները

Յանկացած երկրի համար արտաքին առևտուրը տնտեսական աճի հիմնական գործոններից մեկն է: Այս հանգամանքն առավել մեծ կարևորություն է ձեռք բերում հատկապես փոքր և բաց տնտեսություն ունեցող այնպիսի երկրների համար, ինչպիսին է նաև Հայաստանի Հանրապետությունը: Ըստ որում, համաշխարհային տնտեսության զրքալացման և տնտեսական ինտեգրման պայմաններում ավելի է մեծանում արտաքին շուկաների և արտաքին առևտրի դերն երկրի ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և արդյունավետ կապերի ձևավորման տեսանկյունից: Դրանով իսկ ձևավորվում է երկրի մասնագիտացման աստիճանը, ինչն էլ կանխորոշում է նրա տեղը համաշխարհային տնտեսության մեջ:

Երկրի մասնագիտացման մակարդակը չափվում է մի շարք ցուցանիշների օգնությամբ, որոնց շարքում կարևորվում են համեմատական առավելությունների գործակիցները (ՀԱԳ-եր), որոնք ներկայացնում են

զուտ արտահանման (արտահանում հանած ներմուծում) և արտաքին ապրանքաշրջանառության (արտահանում գումարած ներմուծում) հարաբերությունը: Ակներև է, որ ՀԱԳ-երի մեծությունները գտնվում են [-1; +1] միջակայքում, ըստ որում՝ այն հավասար է -1-ի, երբ երկիրը միայն ներմուծում է, և +1-ի, երբ երկիրը միայն արտահանում է: Աավածից հետևում է, որ որքան մեծ է ՀԱԳ-ի դրական մեծությունը, այնքան բարձր է երկրի մասնագիտացման աստիճանը, և հետևաբար՝ ավելի մեծ է արտաքին առևտրաշրջանառության արդյունավետությունը: Իսկ եթե նկատի ունենանք, որ ՀՆԱ-ի հաշվարկման ամենատարածված եղանակի համաձայն՝

$$\text{ՀՆԱ} = \text{C} + \text{I} + \text{G} \pm \text{NX},$$

որտեղ՝ C-ն՝ սպառումն է,

I - ն՝ համախառն ներդրումները,

G - ն՝ կառավարության ծախսերը,

NX - ը՝ զուտ արտահանումը,

ապա պարզ կդառնա, որ զուտ արտահանման մեծությունը ուղղակի ազդում է ՀՆԱ-ի մեծության վրա այստեղից բխող բոլոր հետևանքներով:

Այդուհաս 27-ում բերված են ՀՀ արտաքին առևտրաշրջանառության հիմնական ցուցանիշներն ու ՀԱԳ-երի մեծությունները 1997–2017 թվականների համար:

Այդուհասի տվյալներից հետևում է, որ 1999թ.-ից 2009թ.-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ՀԱԳ-երի ցուցանիշները նվազել են, ինչը գործնականում նշանակում է, որ այդ տարիներին վատացել է երկրի մասնագիտացման աստիճանը: ՀՀ արտաքին առևտրում ստեղծված ման անբարենպաստ վիճակի պատճառներից մեկը ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի անխոհեմ քաղաքականությունն էր, որի հետևանքով արժևորվեց հայկական դրամը և այն նշված տարիներին կազմեց համապատասխանաբար՝ 2003թ.-ին՝ 578.8, 2004թ.-ին՝ 533.5, 2005թ.-ին՝ 457.7, 2006թ.-ին՝ 416.0, իսկ 2007թ.-ին՝ 342.1: Դրանով իսկ զգալիորեն նվազեցին ՀԱԳ-երի մեծությունները:

⁶ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2005–2009, Կիճակագրական ժողովածու, եր., ՀՀ ԱԿՏ, 2010թ., էջ 13:

2.5. Արտաքին պարտքը

Երկրի զարգացման և տնտեսական աճի ապահովման գործում զգալի դերակատարում ունի նաև պետության արտաքին պարտքը: Այն սովորաբար ընդլայնում է ներքին շուկան և ապահովում երկրի հետագա տնտեսական առաջընթացը:

Աղյուսակ 28-ում բերված են 1999-2010 թվականներին ՀՀ պետական պարտքի և ՀՆԱ-ի դինամիկայի մասին տեղեկությունները: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ ՀՀ պետական պարտքը 1999թ.-ի 930.3 մլն ԱՄՆ դոլարից 2008թ.-ի ավելացել է ավելի քան 2 անգամ՝ կազմելով 1906.0 մլն ԱՄՆ դոլար: Արտաքին պարտքի կրկնապատկմամբ հանդերձ, ինչպես արդեն ցույց տվեցինք վերևում, ՀՀ տնտեսությունում նկատվել է բնակչության զբաղվածության էական անկում, ինչպես նաև երկրի ՀԱԳ-երի էական նվազում: Այլ կերպ ասած՝ արտաքին պետական պարտքի օգտագործման արդյունավետությունը խիստ ցածր է եղել: Եվ եթե 1999թ.-ին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 50.41%, իսկ 2008թ.-ին 15.99%, սա ամենևին էլ չի նշանակում, որ երկիրն ունեցել է զարգացման բավարար ռեսուրսներ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար: Նման թվացյալ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը պայմանավորված է պետական պարտքի նկատմամբ ՀՆԱ-ի զգալի առաջանցիկ աճով, իսկ վերջինիս հիմքում էլ ընկած է շինարարության ծավալների աննախադեպ աճը, ինչն էլ հետևանք է նրա, որ երկրի զարգացման ռեսուրսները կուտակվել են շինարարության ոլորտում՝ մյուս ոլորտներին զրկելով այդ ռեսուրսներից:

Նշված վիճակից դուրս գալու ուղին եղել է 2009թ.-ին ՀՀ պետական պարտքի զգալի ավելացումը (2009թ.-ին 2008թ.-ի նկատմամբ 1457.7 մլն ԱՄՆ դոլարով), ինչի հետևանքով բարձրացել է ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ կազմելով 38.59%:

3. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

*Դեղնած դաշտերին իջել է աշուն,
Անպառը կրկին ներկել է նախշուն:
Դադ-պաղ մեզի հեղ փչում է քամին,
Քշում է փանում փերևը դեղին:
Հովհաննես Թումանյան «Աշուն»*

3.1. Հանրապետության վճարային հաշվեկշիռը

Վճարային հաշվեկշիռը տվյալ երկրի ռեզիդենտների և աշխարհի մյուս երկրների միջև որոշակի ժամանակահատվածում (որպես կանոն՝ մեկ տարվա ընթացքում) իրականացված բոլոր տնտեսական գործարքների արդյունքների համակարգված գրառումներն են: Վճարային հաշվեկշիռը ցույց է տալիս տվյալ երկրի և աշխարհի մյուս երկրների միջև ոչ թե անհատական, այլ համախառն գործարքները:

Վճարային հաշվեկշիռը, լինելով որոշակի երկրի և աշխարհի մյուս երկրների միջև միջազգային տնտեսական հարաբերությունների վիճակը նկարագրող փաստաթուղթ, կարևորագույն կողմնորոշիչ նյութ է պարունակում մակրոտնտեսական քաղաքականության (ներառյալ՝ հարկաբյուջեային, դրամավարկային, արտաքին առևտրի, արտարժույթային) մշակման համար:

Ցանկացած երկրի տնտեսական կապերն այլ երկրների հետ իրենց արտահայտությունն են գտնում վճարային հաշվեկշիռում: Վճարային հաշվեկշիռը տվյալ երկրի միջազգային տնտեսական հարաբերություններին մասնակցության մասին տեղեկատվության կարևոր աղբյուր է: Դրա միջոցով հնարավոր է բացահայտել երկրի մասնակցության ծավալներն ու որակը, ինչպես նաև արտաքին տնտեսական կապերը: Վճարային հաշվեկշիռը ցույց է տալիս յուրաքանչյուր երկրի ֆինանսական վիճակը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Այն արտացոլում է ապրանքների, ծառայությունների, եկամուտների, տրանսֆերտների և ֆինանսների շարժի հետ կապված

բոլոր արտաքին տնտեսական գործառնությունները, որոնք որոշակի ժամանակահատվածում իրականացվում են տվյալ երկրի և մյուս երկրների ռեզիդենտների միջև:

Վճարային հաշվեկշիռը հնարավորություն է ընձեռում գնահատելու երկրի արժույթային և ֆինանսական վիճակը, կատարելու վերլուծություններ, և դրանց հիման վրա էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործընթացը: Այսպես, տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն է թողնում այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին կապիտալի միջազգային հոսքերն են: Ժամանակակից պայմաններում միջազգային արժույթային շուկաներում, ինչպես նաև փոխատվական կապիտալի շուկաներում գործարքների ծավալներն այնքան են ավելացել, որ մի քանի անգամ գերազանցում են միջազգային առևտրի ծավալները:

Ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում անընդհատ խորացող ու զարգացող աշխատանքի միջազգային բաժանումն ավելի ու ավելի է ուժեղացնում ազգային տնտեսությունների փոխկապվածությունն ու փոխպայմանավորվածությունը: Վերջինս իրականում դրսևորվում է ապրանքների ու ծառայությունների արտահանման և ներմուծման, ներդրումների, դրամական միջոցների փոխանցումների և այլ գործարքների միջոցով: Դրանք միջպետական տնտեսական հարաբերություններն են, որոնք կապված են միջազգային առևտրի և միջազգային ֆինանսների հետ: Արտաքին առևտրային կապերը ենթադրում են, որ տվյալ երկրում արտադրված արտադրանքի մի մասը արտահանվում է, իսկ արտասահմանյան երկրներում արտադրված ապրանքների և ծառայությունների մի մասն էլ ներմուծվում է տվյալ երկիր:

Բացի դրանից, ազգային տնտեսությունները փոխկապվածության մեջ են նաև ֆինանսական գործարքների տեսանկյունից: Դա արտահայտվում է նրանով, որ այս կամ այն երկրի քաղաքացիները կարող են իրենց դրամական միջոցները պահել արտասահմանյան բանկերում, գնել արտասահմանյան ընկերությունների ու կառավարությունների կողմից թողարկված արժեթղթեր, ձեռք բերել անշարժ գույք արտասահմանում և այլն:

Յուրաքանչյուր երկիր իր տնտեսական քաղաքականությունը մշակելիս, պետք է հստակ պատկերացնի մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածության մեխանիզմը ոչ միայն իր երկրի, այլ նաև մյուս երկրների համար: Դա հնարավորություն կտա հաջողությամբ իրականացնել տնտեսական քաղաքականությամբ նախատեսված խնդիրները:

Այլ կերպ ասած՝ վճարային հաշվեկշիռը փաստաթուղթ է, որտեղ որոշակի ժամանակահատվածի համար (տարի, եռամսյակ, ամիս) հաշվառվում են տվյալ երկրի արտաքին տնտեսական գործունեության հետ կապված բոլոր վճարումները (ծախսերը) և մուտքերը (եկամուտները): Այն ցույց է տալիս յուրաքանչյուր երկրի ֆինանսական դրությունը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Ինչպես երևում է սահմանումից, վճարային հաշվեկշիռը արտացոլում է ապրանքների, ծառայությունների, եկամուտների, տրանսֆերտների և ֆինանսների հետ կատարվող արտաքին տնտեսական գործարքները, որոնք իրականացվում են տվյալ երկրի ռեզիդենտների և այլ երկրների ռեզիդենտների միջև որոշակի ժամանակահատվածում:

Վճարային հաշվեկշիռն արտացոլում է ոչ թե անհատական գործարքներ, այլ համախառը գործարքներ տվյալ երկրի և այլ երկրների միջև: Բանի որ վճարային հաշվեկշիռը բնորոշում է տվյալ երկրի ֆինանսական վիճակը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, ապա այն դառնում է մակրոտնտեսական քաղաքականության մշակման կարևոր կողմնորոշիչ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հարկաբյուջետային, դրամավարկային, արտաքին առևտրային, արժույթային և այլ քաղաքականությունների: Բացի դրանից, վճարային հաշվեկշիռը, ըստ էության, մակրոտնտեսական վերլուծության և կանխատեսման գործիքներից մեկն է: Դրա օգնությամբ հնարավոր է պարզել, թե ինչպես է զարգացել արտաքին առևտուրը որոշակի ժամանակահատվածում: Վճարային հաշվեկշիռն անմիջական ազդեցություն է ունենում արտադրության, զբաղվածության, սպառման և արժույթի փոխարժեքի վրա: Վճարային հաշվեկշիռը հնարավորություն է տալիս հետևելու արտասահմանյան ներդրումների ներգրավման ձևերին, արտասահմանում կատարվող ներդրումներին, երկրի արտաքին պարտքի ժամանակին մարմանը և այլն: Այն միաժամանակ ցույց է

տալիս, թե երկրի կենտրոնական բանկը ինչպես է փոփոխել իր միջազգային պահուստների մակարդակը, վճարումների անհավասարակշռվածությունը:

Տնտեսական բնույթի բոլոր կարգի գործառույթները կատարվում են տվյալ երկրի ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև: Տվյալ երկրի ռեզիդենտ է հանդիսանում այն ֆիզիկական և/կամ իրավաբանական անձը, ով տվյալ երկրում անկախ քաղաքացիությունից ապրում է մեկ տարուց ավելի: Դիվանագետներն ու զինվորական միավորումների անձնակազմերը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները ռեզիդենտ չեն այն երկրի համար, որտեղ գտնվում են: Սակայն վերազգային կորպորացիաներին բնորոշ է հետևյալ իրավիճակը, գլխամասային ընկերությունը ռեզիդենտ է համարվում այն երկրի համար, որտեղ այն գրանցված է, իսկ նրա մասնաճյուղերը կամ դուստր ձեռնարկությունները, արտասահմանյան բաժանմունքները կարող են գրանցված լինել այլ երկրներում, հետևաբար ռեզիդենտ են համարվում այդ երկրների համար:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի⁷ համաձայն ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, ով հարկային տարում, այսինքն՝ 12 ամսվա ցանկացած ժամանակահատվածում, գտնվում է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական ու տնտեսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև այն ֆիզիկական անձը, ով պետական ծառայության մեջ է և ժամանակավորապես բացակայում է ՀՀ տարածքից:

Եթե ֆիզիկական անձը տվյալ երկրում ունի սեփականության օբյեկտներ /սեփականության իրավունք հողի, շինությունների և այլնի նկատմամբ/, ապա նրա տնտեսական շահերի կենտրոնը գտնվում է տվյալ երկրում: Իսկ եթե ֆիզիկական անձը մեկ տարուց ավելի բացակայում է տվյալ երկրի տնտեսական տարածքից, ապա նա դադարում է տվյալ երկրի ռեզիդենտ լինելուց:

Վճարային հաշվեկշիռը բնութագրող հատկանիշներից մեկն էլ այն է, որ արտացոլում է «երկրի արտաքին տնտեսական վիճակը ապրանքների կամ ծառայությունների միջազգային շուկայում, այլ կերպ ասած՝ երկրի դերը՝ որպես արտահանողի կամ ներմուծողի: Վճարային

⁷ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 3 (ՀՕ-183):

հաշվեկշիռի մի շարք տարիների տվյալների հիման վրա կարելի է բնութագրել երկրի վիճակը արտասահմանյան ներդրումների ներգրավման տեսանկյունից: Այսինքն՝ որոշվում է արտաքին պարտքի հաշվեկշիռը, որը արտասահմանյան ակտիվների ու երկրի պասիվների հարաբերակցությունն է ժամանակի որոշակի հատվածում:

Վճարային հաշվեկշիռի միջոցով կարելի է պատկերացում կազմել ազգային տնտեսության մասին: Եթե պարզվի, որ երկրից հսկայական չափերի կասկտալ է դուրս հոսում, ապա դրանից կարելի է եզրակացնել տվյալ երկրի արժույթային և ֆոնդային շուկաների ճգնաժամային իրավիճակի մասին: Վճարային հաշվեկշիռը կազմվում է ինչպես հաշվարկային, այնպես էլ վերլուծական խնդիրների լուծման նպատակով: Ի դեպ, դրանք միմյանց հետ սերտորեն կապված են: Վճարային հաշվեկշիռի վերլուծության միջոցով կարելի է բացահայտել երկրի արտաքին տնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպման հնարավորությունները և կողմնորոշվել արտաքին տնտեսական քաղաքականությանը վերաբերող հստակ որոշումների ընդունման հարցում:

Այս տնտեսական գործիքը լավագույնս է բնութագրում երկրի սոցիալ-տնտեսական վիճակը: Այն բնորոշում է նաև թե տվյալ երկիրը արտադրող է (երբ առկա է վճարային հաշվեկշիռի դրական մնացորդ), թե սպառող (երբ վճարային հաշվեկշիռի մնացորդը բացասական է): Եվ քանի որ մարդկային հասարակության մեջ էլ ավելի մեծ մասշտաբներով և ամրագրված կանոններով ու օրենքներով է գործում էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը (հիշենք, դպրոցական դասագրքերում այն սահմանվում էր որպես բնության մեջ այնպիսի իրավիճակ, երբ էներգիան ոչ մի տեղ չի կորչում, այն պահպանվում է՝ մի վիճակից անցնելով մեկ այլ վիճակի), ուստի յուրաքանչյուր երկիր իր վճարային հաշվեկշիռի բացասական մնացորդը պետք է փակի կամ վճարի ինչով կարող է: Նկատենք նաև, որ տնտեսական զարգացումների հիմքում ընկած են բնության օրենքները՝ սոսկ մեկ վերապահումով – պայմանավորված մարդ-գործոնով, որն արարելով հանդերձ «փչացնում է» բնության օրենքների մաքուր տեսքով հանդես գալու հնարավորությունը:

Այսպես, Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռի բացասական մնացորդի առյուծի բաժինը հասնում է «Ապրանքների և

ծառայությունների ընթացիկ հաշվին»: Ավելի պարզ՝ վճարային այս հոդվածը ցույց է տալիս, թե ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման տարբերությունն ինչպիսին է: Եթե այդ տարբերությունը բացասական է (այսինքն ավելի շատ եք ներմուծում, քան արտահանում), ապա այդ մասով Ձեր վճարած փողը (դրամական հոսքը) ուղղվում է այն երկիր (կամ երկրներ), որոնցից ձեռք բերած ապրանքների և ծառայությունների համար մենք պետք է վճարենք: Իսկ եթե այդ տարբերությունը դրական է, ապա մեզ են վճարելու մյուսները: Առաջին դեպքում, Ձեր երկիրը հանդես է գալիս որպես գնորդ, իսկ երկրորդ դեպքում՝ վաճառող: Լավ է լինել վաճառող երկիր, քանի որ այս դեպքում մյուսներն են Ձեզ վճարում, իսկ հակառակ դեպքում՝ դուք ուրիշներին:

Հարց է առաջանում, իսկ ինչո՞վ վճարել, որտեղից են առաջանում այն աղբյուրները, միջոցները, որոնց հաշվին պետք է ապահովվի մյուս երկրների հետ համարժեք փոխանակությունը: Առաջին այդպիսի աղբյուրը երկրում արտադրված կամ թողարկված ապրանքներն ու ծառայություններն են, որոնց իրացումից ստացված միջոցներով կատարում եք մյուսներից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումը: Հայաստանի Հանրապետության համար այս ուղին «աշխատում է» մասամբ, քանի որ մեր ներմուծումը գերազանցում է արտահանմանը: Հաջորդ աղբյուրն այն է, որ Ձեր երկրից արտահանված կապիտալը, ապահովելով եկամուտներ (կամ տոկոսներ), վերադառնում է Ձեր երկիր, ինչի հաշվին էլ դուք կարողանում եք կատարել Ձեր վճարումները: Մեր երկրի համար դրանք չնչին մեծություններ են և «եղանակ» չեն ստեղծում: Ավաճն ավելի ակնառու դարձնելու նպատակով արյուսակ 29-ում բերված է ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան 1995–2013 թվականներին: Տվյալներից հետևում է, որ արյուսակ 29-ում ներառված ողջ ժամանակահատվածում (19 տարի) հանրապետության ընթացիկ հաշիվը միշտ եղել է բացասական: Ավելին, եթե ընթացիկ հաշվի բացասական մնացորդը 1996–1998 թվականներին ավելացել է, 1998–2004 թվականներին՝ նվազել, ապա սկսած 2007 թվականից այն կտրուկ ավելացել է (նախորդ տարվա համեմատությամբ ավելի քան 5 անգամ), իսկ 2008 թվականին (որպես

«քրչարյանական էպոխայի» հետևանք) հասել իր բարձրագույն կետին՝ 2006 թվականի ցուցանիշը գերազանցելով աննախադեպ չափերով՝ շուրջ 12 անգամ: 2008–2013 թվականներին ընթացիկ հաշվի բացասական մնացորդն ունեցել է թեև դանդաղ, սակայն կայուն նվազման միտում՝ 2013 թվականին ունենալով շուրջ 1.1 մլրդ ԱՄՆ դոլարի բացասական արժեք:

Երկրի ընթացիկ հաշվի ճեղքվածքն առաջանում է ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման տարբերությունից: Այսինքն, թե՛ ապրանքները և թե՛ ծառայություններն ավելի շատ են ներմուծվում, քան արտահանվում: Ըստ որում, 1995–2013 թվականներին ընկած ողջ ժամանակահատվածում ինչպես ապրանքների, այնպես էլ ծառայությունների զուտ արտահանումն ունեցել է բացասական նշան:

Եթե ապրանքների և ծառայությունների ընդհանուր զուտ արտահանման (արտահանման և ներմուծման տարբերությունը) մեծությունն ընդունենք 100%, ապա 1995 թվականին այդ գործարքներից ստացված, ըստ էության, վնասի չափը կազմել է -426,7 մլն դոլար, որի 94,4%-ը բաժին է ընկել ապրանքների զուտ արտահանմանը, իսկ 5,6%-ը՝ ծառայությունների զուտ արտահանմանը, 1996 թվականին այդ մեծությունները կազմել են համապատասխանաբար՝ -519,9 մլն դոլար, 90,2% և 9,8%-ը, 2000 թվականին՝ -519,3 մլն դոլար, 89,3% և 10,7%, 2005 թվականին՝ -707,8 մլն դոլար, 83,1% և 16,9%, նախաճգնաժամային՝ 2007 թվականին՝ -1812,8 մլն դոլար, 88,3% և 12,7%, 2008 թվականին՝ -2990,6 մլն դոլար, 89,1% և 10,9%, ՀՀ-ում տնտեսական ամենաբարձր անկման տարում՝ 2009 թվականին՝ -2349,4 մլն դոլար, 88,6% և 11,4%, 2011 թվականին՝ -2389,8 մլն դոլար, 86,9% և 13,1%, 2012 թվականին՝ -2459,7 մլն դոլար, 85,8% և 14,2%, 2013 թվականին՝ 2464,9 մլն դոլար, 95,5% և 4,5%: Ինչպես տեսնում ենք բերված թվերից, հանրապետության ընթացիկ հաշվի բացասական մեծության 80–90%-ը (ըստ տարբեր տարիների) ստացվում է ապրանքների զուտ արտահանումից:

Այս համատեքստում կարող է նկատվել հետևյալ առանձնահատկությունը: Համաձայն ՀՀ ԱՎԾ-ի՝ ապրանքների գծով համադրելիությունն ապահովելու համար, վճարային հաշվեկշռի ապրանքներ հոդվածի արտահանման և ներմուծման ծավալները բերված են ՖՕԲ գնով (առանց

բեռնափոխադրման և ապահովագրական վճարների»⁸: Ասվածից հետևում է, որ իրականում ապրանքների հաշվի բացասական մեծությունն ավելի մեծ է քան այդ մասին նշված է վճարային հաշվեկշռում, քանի որ բեռնափոխադրումները և ապահովագրական վճարները, որպես ծախս, զգալի մեծություններ են կազմում:

Ընթացիկ հաշվի կարևոր մասն են կազմում եկամուտներ հոգվածը, որն իր մեջ ներառում է գինծառայողների և սեզոնային մյուս աշխատողների փոխանցումները, եկամուտները ներդրումներից (ուղղակի պորտֆելային և այլ): Ընթացիկ տրանսֆերտներն իրենց հերթին, բաղկացած են պետական կառավարման և այլ (մասնավոր) տրանսֆերտներից: Եվ եթե 2011 թվականին ընթացիկ տրանսֆերտների գումարը կազմել է 723.1 մլն դոլար, ապա այդ գումարից 160.3 մլն դոլարը ստացվել է պետական կառավարման համակարգով, իսկ 562.8 մլն դոլարը այլ (մասնավոր) աղբյուրներից: Ըստ էության խոսքը վերաբերում է մեր այն հարյուր հազարավոր քաղաքացիներին, որոնք տարբեր երկրներից դրամական փոխանցումներ (տրանսֆերտներ) են կատարում իրենց հարազատներին և բարեկամներին: Սակայն, ինչպես վկայում են վիճակագրական տվյալները ընթացիկ հաշվի «Եկամուտներ» և «Ընթացիկ տրանսֆերտներ» հոդվածները չեն փոխհատուցում «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական մեծություններին, ինչի հետևանքով էլ երկրի ընթացիկ հաշիվն ունի բացասական մեծություն:

3.2. Բնակչության աղքատացումը, անհավասարության խորացումը և աղքատության հաղթահարման դրամական արժեքը

Հայաստանի երրորդ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման անցած ժամանակահատվածի, ինչպես նաև ներկայիս չլուծված հիմնախնդիրներից է շարունակում մնալ բնակչության աղքատության բարձր մակարդակը: Անցումը համայնավարությունից դեպի ազատ շուկայական հարաբերություններ ՀՀ-ում ուղեկցվեց մի շարք անցանկալի գործընթացներով (Սպիտակի երկրաշարժը, որի հետևանքով

հանրապետությունը կորցրեց իր արտադրական պոտենցիալի մեկ երրորդը, Արցախի հակամարտությունը հարևան հանրապետության հետ, Ադրբեջանից հարյուր հազարավոր փախստականները և դրանց ապահովման համար անհրաժեշտ միջոցների հայայթումը և այլն), որոնց ազդեցությունը հատկապես զգալի էր անցման առաջին ժամանակահատվածում (աղյուսակ 30): Ու թեև սկսած 2001թ.-ից նկատելի է բնակչության աղքատության նվազման միտումը, սակայն այն շարունակեց մնալ բարձր և 2008թ.-ին կազմեց 23.5%: Աղքատության մակարդակի վրա իր բացասական ազդեցությունն ունեցավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որի արդյունքում 2009թ.-ին աղքատության մակարդակը նախորդ տարվա համեմատ ավելացավ՝ կազմելով 28.7%:

Շուկայական տնտեսության անցման հետ կապված հաջորդ լուրջ սոցիալական հիմնախնդիրն առնչվում է ՀՀ բնակչության դրամական եկամուտների (աղյուսակ 31) և ծախսերի (աղյուսակ 32) բևեռացմանը և անհավասարության խորացմանը: Այսպես, աղյուսակ 31-ի տվյալներից հետևում է, որ եթե ամենահարուստ՝ X-րդ դեցիլային խմբի և ամենաաղքատ՝ առաջին դեցիլային խմբի մեկ շնչի հաշվով դրամական եկամուտների հարաբերակցությունը 1999թ.-ին կազմում էր 115.5 անգամ, իսկ 2009թ.-ին այն զգալիորեն նվազել է, հասնելով 14.3 անգամ ցուցանիշի, սակայն այդ հարաբերակցությունը շարունակում է բարձր մնալ, եթե հաշվի առնենք, որ միջազգայնորեն ընդունված նորմալ հարաբերակցությունը կազմում է 6-ից 8 անգամ:

Ինչպես ցույց են տալիս մի շարք տնտեսագետների (Նրանց թվում է նաև պրոֆեսոր Բ. Բագրատյանը) ուսումնասիրությունները, Հայաստանի Հանրապետության կամ Ուկրաինայի համեմատաբար «լավ» Ջինիի գործակիցը ըստ եկամուտների՝ առ ոչինչ է, եթե նկատի չենք ունենում եկամուտների բաշխման ազդեցությունը հարստության վրա: Եթե հարստության բաշխումը մեծ տատանումներ է տալիս, ապա չպետք է շտապել և փորձել իջեցնել բաշխումը ըստ եկամուտների (ասենք, արագորեն բարձրացնել նվազագույն աշխատավարձը): Սա կազմաբանդում է տնտեսական աճը: Նման ուսումնասիրություններ կան Ուկրաինայի համար, իսկ Հայաստանի համար բացակայում են: Այլ կերպ ասած, եթե մեզանում նշված ժամանակահատվածում նվազել է բնակչության

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետություն սոցիալ-տնտեսական վիճակը 2011 թվականի հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱԿԾ, 2012, էջ 264:

եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարությունը, ապա անգամներով աճել է հարստության (անշարժ և շարժական գույք, արտադրական կապիտալ) անհավասար բաշխումը:

Բնակչության մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերի համապատասխան ցուցանիշները հետևյալն են. եթե ամենահարուստ՝ X-րդ դեցիլային խմբի և ամենաաղքատ՝ առաջին դեցիլային խմբի մեկ շնչի հաշվով սպառողական ծախսերի հարաբերակցությունը 1999թ.-ին կազմում էր 9.7 անգամ, ապա 2009թ.-ին այդ հարաբերակցությունը կազմել է 8.0 անգամ:

Աղյուսակ 33-ում բերված՝ ՀՀ-ում դրամական եկամուտների դիմամիկան ըստ տնային տնտեսությունների դրամական եկամուտների դեցիլային խմբերի 2001 և 2009թ.-ին (մեկ շնչի հաշվով միջին ամսական, դրամով), տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զգալիորեն վատացել է առաջին՝ ամենաաղքատ դեցիլային խմբում ընդգրկված տնային տնտեսությունների աշխատանքից ստացվող եկամուտների վիճակը: Եթե 2001թ.-ին այդ խմբի համար աշխատանքից ստացվող եկամուտների մասնաբաժինն ընդամենը դրամական եկամուտների մեջ կազմել է 26.0%, ապա 2009թ.-ին աշխատանքից ստացվող եկամուտների մասնաբաժինը նվազել է՝ կազմելով ընդամենը եկամուտների 8.5%-ը: X-րդ՝ ամենահարուստ խմբի համար այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 25.6% և 68.4%:

Այլ կերպ ասած, հատկապես բնակչության ցածր եկամտային դեցիլներ ունեցող խմբերում աշխատանքը (աշխատավարձը) կորցրել է իր մոտիվացիոն բնույթը և այդ խմբերի բնակչության եկամուտները ձևավորվում են հիմնականում թոշակների, նպաստների ու տրանսֆերտների հաշվին: Մինչդեռ, բոլորովին այլ է պատկերը ամենաբարձր՝ X-րդ դեցիլային խմբում:

Աղյուսակ 34-ում բերված են Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ դրամական ծախսերը 1998–2016 թվականների համար: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ համապատասխան տարիների ՀՆԱ-ի մեջ կշռված գումարները հսկայաձավալ չեն, և սոցիալական այդ չարիքի վերացման համար անհրաժեշտ

ֆինանսական միջոցները պետությունը կարող էր հայթհայթել տնտեսության մեջ ստվերի կրճատման, կոռուպցիայի նվազեցման և կառավարման արդյունավետության բարձրացման ճանապարհով:

3.3. Ազգային հարստություն ստեղծելու տնտեսության ներուժը

Տանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և վերարտադրության վիճակն ու գործընթացը բնութագրվում են մի շարք ամփոփ մակրոտնտեսական ցուցանիշների օգնությամբ: Դրանց շարքում կարևորվում են համախառն ներքին արդյունքի (դրա հաշվարկման տարբեր մոդիֆիկացիաներով, օրինակ՝ դրա մեծության չափը, աճի տեմպը, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն և այլն), ազգային եկամտի, համախառն ազգային եկամտի և մյուս մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկը՝ տարբեր մոդիֆիկացիաներով:

Սակայն նվաճ ցուցանիշների հաշվարկման հիմնական թերությունն այն է, որ դրանք, պատկերավոր ասած, բնութագրում են երկրի զարգացման տվյալ պահը՝ առանց ներկայացնելու սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորություններն ու ներուժը: Այս հիմնական բացը չեզոքացնում է ազգային հարստության ցուցանիշը: Ցավոք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը մինչ օրս չի հաշվարկում այդ ցուցանիշի մեծությունը:

Ներկայում ընդունված են ազգային հարստության սահմանման և հաշվարկման Համաշխարհային բանկի միասնական մեթոդական ցուցումները: Ազգային հարստությունը⁹ հանդիսանում է Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ) անբաժանելի մասը: ԱՀՀ-ն հիմք է հանդիսանում կառավարության, մասնավոր հատվածի, միջազգային կազմակերպությունների և այլ հետաքրքրված անձանց կողմից տնտեսական աճի հաշվարկման համար:

Ազգային եկամուտն ու բարեկեցությունը հիմնվում են երկրի ակտիվների կամ հարստության վրա, որոնց հաշվարկման հիմքում ընկած

⁹ The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future. World Bank Group. <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/29001/9781464810466.pdf>

են տարբեր չափանիշներ: Ազգային հարստությունն իր մեջ ներառում է հետևյալ չորս բաղկացուցիչները. արտադրված կապիտալ, բնական կապիտալ (պաշարներ), մարդկային կապիտալ և զուտ արտաքին ակտիվներ:

Կայուն երկարաժամկետ տնտեսական աճը պահանջում է ներդրումների և պորտֆելային ակտիվների առավել ինտենսիվ ընդգրկում: Թեև ՀՆԱ-ն հանդիսանում է տնտեսական աճի հաշվարկման կարևոր չափանիշ, սակայն այն հաշվում է միայն եկամուտը և արտադրությունը, և չի արտացոլում ակտիվների հիմնական բազայում տեղի ունեցող փոփոխությունները: Առանձին դիտարկվող ՀՆԱ-ն կարող է ճշգրտորեն չբնութագրել տնտեսական իրավիճակը: Այն չի արտացոլում բնական կապիտալի սպառումը և ակտիվների մաշվածությունը, չի տալիս հետևյալ հարցերի պատասխանը. ներդրումներն ու հարստության կուտակումը աճում են բնակչության թվի աճի արդյունքում կամ էլ ակտիվների համամասնությունը համապատասխանո՞ւմ է արդյոք երկրի զարգացման նպատակներին:

Նկատենք նաև, որ ներառական տնտեսական աճի համար առանձնացվում են երեք հիմնասյուներ՝

- բարձր, կայուն աճ՝ տնտեսական հնարավորությունների ստեղծման և ընդլայնման համար,
- այդպիսի հնարավորությունների ընդլայնումը՝ երաշխավորելու համար, որ հանրության անդամները կարող են մասնակցել և օգտվել տնտեսական աճի արդյունքներից,
- սոցիալական ապահովության ցանցերի ձևավորումը, որոնց նպատակն է ծայրահեղ աղքատության կանխարգելումը¹⁰:

Ուստի ներկայումս արդիական է << տնտեսության դիվերսիֆիկացումը՝ ելնելով վերը նշված չափանիշներից և տնտեսությունում մոնո-դյուոների զարգացման բացառումից:

Ինչպես նշեցինք վերևում, ազգային հարստության հաշվարկը հիմնվում է ակտիվների առանձին դասեր կազմող հետևյալ չորս բաղադրիչների վրա.

- արտադրված կապիտալ և քաղաքային հողատարածքներ՝ մեքենաներ, շենքեր, սարքավորումներ, բնակելի և ոչ բնակելի քաղաքային հողատարածքներ՝ շուկայական գներով արտահայտված,
- բնական կապիտալ (պաշարներ)՝ էներգետիկ ռեսուրսներ (նավթ, գազ, քարածուխ) և օգտակար հանածոներ (10 կատեգորիա), գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ (արտավայրեր և ցանուլի հողատարածքներ), անտառներ (փայտանյութեր և որոշ յուրահատուկ անտառային բարիքներ) և հսկվող (պաշտպանվող) տարածքներ: Բնական կապիտալի (պաշարների) արժեքը հաշվարկվում է վարձակալական վճարի դիսկոնտավորված գումարով, որը ձևավորվում է տվյալ ակտիվի գործածության ողջ ժամկետի ընթացքում,
- մարդկային կապիտալ՝ ըստ սեռի և զբաղվածության կարգավիճակի (զբաղված, ինքնազբաղված) դասակարգված բնակչության՝ աշխատանքի ընթացքում գործադրած ջանքերի, ունակությունների և փորձի արժեքի: Մարդկային կապիտալի արժեքը հաշվարկվում է որպես ողջ կյանքի ընթացքում վաստակած աշխատավարձի դիսկոնտավորված գումար:
- զուտ արտաքին ակտիվներ՝ երկրի արտաքին ակտիվների և պարտավորությունների գումարի (օրինակ՝ օտարերկյա ուղղակի ներդրումներ) տարբերությունը:
Ստորև բերված աղյուսակ 35-ում ներկայացված է նախկին Խորհրդային Միության 14 հանրապետությունների ազգային հարստության և դրա բաղադրիչների մասին տեղեկատվությունը:
- Աղյուսակ 35-ի տվյալների ուսումնասիրությունից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները՝
 - բնակչության մեկ շնչի հաշվով ընդամենը ազգային հարստության ամենաբարձր արժեքներն ունեն Էստոնիան (258903), Լատվիան (236906) և Ռուսաստանի Դաշնությունը (188715), իսկ ամենացածրը՝ Տաջիկստանը (42286), Մոլդովան (35380) և Ղրղզստանը (24429): Այսինքն՝ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի (Էստոնիայի) և ամենացածր ցուցանիշ ունեցող երկրի (Ղրղզստանի) միջև տարբերությունը կազմում է 10,6 անգամ, իսկ ամենաբարձր ցուցանիշ

¹⁰ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ, OECD) սահմանումը, արդյուրը՝ <http://www.oecd.org/inclusive-growth/#introduction>

ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը կազմում է մոտ 5 անգամ,

- արտադրված կապիտալի ամենաբարձր արժեքներն ունեն Լատվիան (113746), Էստոնիան (91646) և Լիտվան (63254), իսկ ամենացածրը՝ Հայաստանը (15451), Մոլդովան (14213) և Ղրղզստանը (6159): Այս բաղադրիչով ամենաբարձր ու ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների տարբերությունը կազմում է 18,5 անգամ, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը՝ 7,4 անգամ է,
- բնական կապիտալի ամենաբարձր արժեքներն ունեն Ղազախստանը (66606), Թուրքմենստանը (59062) և Ռուսաստանը (46921), իսկ ամենացածրը՝ Տաջիկստանը (7431), Վրաստանը (7344) և Մոլդովան (4898): Այս բաղադրիչով ամենաբարձր ու ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների տարբերությունը կազմում է 13,6 անգամ, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը շուրջ 5 անգամ է,
- մարդկային կապիտալի ամենաբարձր արժեքներն ունեն մերձբալթյան երեք երկրները՝ Էստոնիան (155041), Լատվիան (113472) ու Լիտվան (100081), իսկ ամենացածրը՝ Ադրբեջանը (11961), Ղրղզստանը (6729) և Տաջիկստանը (5015): Այս բաղադրիչով ամենաբարձր ու ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրների՝ Էստոնիայի և Տաջիկստանի տարբերությունը 31 անգամ է, իսկ ամենաբարձր ցուցանիշ ունեցող երկրի և Հայաստանի ցուցանիշների միջև տարբերությունը՝ 5,6 անգամ,
- բնակչության մեկ շնչի հաշվով զուտ արտաքին ակտիվների ցուցանիշը դրական մեծություն ունի վառելիքաէներգետիկ ռեսուրսներ արտահանող երկրներում՝ Ադրբեջանում (7384), Ռուսաստանի Դաշնությունում (2175) և Թուրքմենստանում (519): Մնացած բոլոր երկրների համար զուտ արտաքին ակտիվներն ունեն բացասական մեծություն, ըստ որում՝ ամենամեծ բացասական մեծություն ունեցող երեք երկրներն են Լիտվան (-7047), Էստոնիան (-7876) և Լատվիան (-9049), իսկ ամենափոքր բացասական մեծություններն ունեն Տաջիկստանը (-557), Ղրղզստանը (-1029) և Ուկրաինան (-1414):

Բնակչության մեկ շնչի հաշվով ընդամենը ազգային հարստության ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը նախկին Խորհրդային Միության 14 հանրապետությունների կազմում զբաղեցնում է 10-րդ տեղը, արտադրված կապիտալի ցուցանիշով՝ 12-րդ տեղը, բնական կապիտալի ցուցանիշով՝ 10-րդ տեղը, իսկ մարդկային կապիտալի ցուցանիշով՝ 8-րդ տեղը: Բնակչության թվաքանակի ցուցանիշով Հայաստանը 10-րդ տեղում է:

Ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ-ում բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության զգալի մասը (51,7%-ը) կազմում է մարդկային կապիտալը և ազգային հարստության բաղադրիչների կազմում Հայաստանն ունի համեմատական առավելություն, ուստի այն դառնում է ազգային հարստության ավելացման հիմնական գործոնը: Այդ պատճառով էլ հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականությունը պետք է նպատակառոտված լինի այդ կապիտալի զարգացմանը և օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

Վերը բերված մոտեցումը բխում է նաև այն հանգամանքից, որ օրինակ, թեև մերձբալթյան հանրապետություններն ունեն զուտ արտաքին ակտիվների ամենամեծ բացասական արժեքները, սակայն դրանով հանդերձ նրանք ունեն նախկին Խորհրդային հանրապետությունների շարքում բնակչության մեկ շնչի հաշվով ամենամեծ ազգային հարստության արժեքները: Դա պայմանավորված է նշված հանրապետություններում մարդկային կապիտալի օգտագործման բարձր արդյունավետությամբ և արժևորմամբ:

Ազգային հարստության հաշվարկման մեթոդաբանության կարևոր հիմնախնդիրներից է այդ մեծության և երկրի ՀՆԱ-ի միջև եղած կապի բացահայտումը: Ակնհայտ է, որ երկրի ազգային հարստության մեծության ավելացումն ապահովվում է ՀՆԱ-ի աճի հաշվին, իսկ ավելի ստույգ՝ ՀՆԱ-ի այն մասի հաշվին, որն օգտագործվում է կուտակման նպատակով և ի վերջո դառնում է վերը նշված կապիտալի բաղկացուցիչներից որևէ մեկը, կամ տարրալուծվում է այդ բաղկացուցիչների միջև՝ որոշակի համամասնությամբ:

Ստորև բերված աղյուսակ 36-ում ներկայացված է ՏՀԶԿ (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) երկրների

և Հայաստանի Հանրապետության բնակչության մեկ շնչի համար հաշվարկված ազգային հարստության և ՀՆԱ-ի միջև եղած կապը, որն ըստ էության բնութագրում է թե ինչ ժամանակահատվածում է ՀՆԱ-ն «կապիտալացվում» և վերածվում ազգային հարստության: Պարզ է նաև, որ որքան կարճ է այդ ժամանակահատվածն, այնքան ավելի արդյունավետ է գործում երկրի տնտեսությունը և բարձր են նրա վերարտադրական հնարավորությունները և սոցիալ-տնտեսական զարգացման ներուժը: Տնտեսագիտական իմաստով այդ ցուցանիշը լավագույնն է բնութագրում երկրի կառավարման որակը, որն էլ դառնում է կայուն երաշխիք տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության կենսամակարդակի հետագա բարձրացման համար:

Այսպես, աղյուսակ 36-ի տվյալներից հետևում է, որ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության և ՀՆԱ-ի միջև հարաբերակցությունն ամենափոքրն է Թուրքիայում և կազմում է 4,4 տարի, էստոնիայում այդ ցուցանիշը կազմում է 13,2, իսկ Հայաստանում՝ 13,7 տարի: Ինչ վերաբերում է ՏՀԶԿ մյուս երկրներում ազգային հարստություն/ՀՆԱ հարաբերակցության բարձր մեծություններին, ապա օրինակ ԱՄՆ-ում այն կազմում է 18,0 տարի, Կանադայում՝ 20,2, իսկ Շվեյցարիայում՝ 16,8 տարի: Այդ հանգամանքը բացատրվում է նշված երկրներում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի բարձր ցուցանիշներով, որի ավելացումը պահանջում է ավելի շատ ռեսուրսներ ու ջանքեր, քան այդպիսի ցածր ցուցանիշ ունեցող երկրներում:

Նկատենք, որ օրինակ Սինգապուրում բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության մեծությունը 2014թ.-ի տվյալներով կազմել է 775196 ԱՄՆ դոլար, որից՝ արտադրված կապիտալը կազմել է 186017, բնական կապիտալը՝ 56, մարդկային կապիտալը՝ 466119 (կամ ընդամենը ազգային հարստության 60,1%-ը), իսկ զուտ արտաքին ակտիվները՝ 123004 ԱՄՆ դոլար¹¹: Այսինքն, Սինգապուրում բնակչության մեկ շնչի հաշվով ազգային հարստության մեծությունը, որը ՀՀ-ի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 14,6 անգամ, հիմնականում ձեռք է բերվել մարդկային կապիտալի հաշվին, ինչը օրինակ կարող է ծառայել ՀՀ-ում ազգային հարստության ավելացման քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ:

¹¹ Stui' The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future, էջ 231.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- 1999–2008 թթ. ժամանակահատվածում իրականացված սոցիալ-տնտեսական քաղաքականությունն ամենևին էլ չի նպաստել ինչպես ՀՀ բնակչության կենսամակարդակի նկատելի բարձրացմանը, բացարձակ և հարաբերական արդատության կրճատմանը, այնպես էլ ՀՀ տնտեսության հզորացմանն ու ազգային հարստության ավելացմանը: Այլ ճիշտ հակառակ՝ ՀՀ տնտեսության զարգացման վրա զգալի է դարձել ռիսկերի (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին) և սպառնալիքների ներգործությունը, որի ապացույցն էր 2009թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, որի արդյունքում նկատվեց ՀՀ ՀՆԱ-ի դրամական արտահայտությամբ 14.1%-անոց անկում, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 25.9%, որը համաշխարհային մասշտաբով ամենաբարձր ՀՆԱ-ի անկում գրանցած ցուցանիշներից մեկն էր (երրորդը վերջից՝ դրամական արտահայտությամբ և երկրորդը վերջից՝ դոլարային արտահայտությամբ): Դրանով իսկ մեկ անգամ ևս ապացուցվեց, որ ընդարյանական տասնամյակի ընթացքում ձևավորվել է անկենսունակ և չդիվերսիֆիկացված տնտեսություն: Այս ամենով հանդերձ կարելի է միարժեքորեն պնդել, որ ընդարյանական կառավարման տասնամյակը կարելի է համարել կորսված տարիներ, որի հետևանքները զգացվում են մինչև օրս:
- Քոչարյանական կառավարման տասնամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում այդպես էլ իրականություն չդարձավ բարեփոխումների երրորդ՝ շուկայական ինստիտուտների կայացման փուլը, որը պետք է ապահովեր նախկին տարիների ընթացքում իրականացված տնտեսական բարեփոխումների հաջորդականությունը և կատարելագործումը: Այդ մասին բազմիցս անդրադարձ է կատարվել Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, այլ միջազգային կազմակերպությունների կողմից: Կյանքը ցույց տվեց, որ այդ ժամանակահատվածի իշխանությունն ամենևին էլ այդպիսի խնդիր չէր դրել իր առաջ, ինչի մասին են վկայում

վերը ներկայացված փաստական տվյալներն ու դրանց հիման վրա կատարված հետազոտությունը:

- Ընդամենը 5 տարիների ընթացքում՝ 2003–2008 թվականներին, արդեն կամաց-կամաց ոտքի կանգնող մշակող արդյունաբերությունը՝ հատկապես ճշգրիտ գործիքաշինությունը, սարքաշինությունը, աղամանդագործությունը, և տնտեսության մի շարք այլ ոլորտներ, ունենալով մրցակցային առավելություններ և արտահանման մեծ ներուժ, իրական ազդեցություն կարող էին ունենալ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության բարեկեցության բարելավման վրա, փոշիացան, փակվեցին: Փաստորեն, դրա հետևանքով, տնտեսությունը կորցրեց ոչ միայն գործող աշխատատեղերը, այլև որակյալ ու բարձր վարձատրվող աշխատուժը, ինչպես նաև զրկվեց նոր ներդրումային հնարավորություններից: Անդրադարձ կատարելով այդ ժամանակահատվածի արժույթային քաղաքականությանը կարելի է նկատել մեր կողմից նշված օրինաչափությունը:
- 2008թ.-ից սկսած հետագա իրադարձությունները վկայում են այն մասին, որ տնտեսագիտորեն չհիմնավորված, շատերի կողմից ժամանակին խիստ քննադատության արժանացած անհեռանկարային քաղաքականության պատճառով երկիրը՝ կարճաժամկետում ստանալով որոշակի արդյունք, ոչ միայն կորցրեց իր ռազմավարական առավելությունները, չկարողացավ արդյունավետ օգտագործել արտաքին հնարավորությունները, այլև պարզապես մսխեց երկրի զարգացման ներքին ներուժը, որի բացասական ազդեցությունը զգացվում է մինչև օրս:
- ՀՀ երրորդ հանրապետության երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնավարման տարիներն ավելի շատ հայտնի են որպես ՀՀ-ում մինչ այսօր գործող օլիգարխիկ համակարգի կազմավորման, ձևավորման և կայացման ժամանակահատված, որը հետագայում պատճառ դարձավ ՀՀ բնակչության աղքատացման, գործազրկության բարձր մակարդակի, և որպես հետևանք՝ հսկայական չափերի հասնող բնակչության արտագաղթի:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 1. ՀՀ համախառն ներքին արդյունքը և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, 1999–2010 թվականներին

| Տարիներ | ՀՆԱ | | ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով | | Տեղեկատու | |
|---------|-------------|---------------|-----------------------------------|-----------|--|--|
| | մին ՀՀ դրամ | մին ԱՄՆ դոլար | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար միջին տարեկան փոխարժեքը | մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակը, հազ. մարդ |
| 1999 | 987 444 | 1 845 | 305 757 | 571 | 535.06 | 3 229.5 |
| 2000 | 1 031 338 | 1 912 | 320 182 | 593 | 539.53 | 3 221.1 |
| 2001 | 1 175 877 | 2 118 | 365 849 | 659 | 555.08 | 3 214.1 |
| 2002 | 1 362 472 | 2 376 | 424 235 | 740 | 573.35 | 3 211.6 |
| 2003 | 1 624 643 | 2 807 | 505 914 | 874 | 578.77 | 3 211.3 |
| 2004 | 1 907 945 | 3 577 | 593 636 | 1 113 | 533.45 | 3 214.0 |
| 2005 | 2 242 881 | 4 900 | 697 088 | 1 523 | 457.69 | 3 217.5 |
| 2006 | 2 656 190 | 6 384 | 824 622 | 1 982 | 416.04 | 3 221.1 |
| 2007 | 3 149 283 | 9 206 | 976 068 | 2 853 | 342.08 | 3 226.5 |

| | | | | | | |
